ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

2017 - 2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հաստատված է՝

Համայնքի ավագանու 15.02.2017 թ. N 07 - Ն որոշմամբ

ԱՊԱՐԱՆ – 2017 Թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
Ա Պ Ա Ր Ա Ն Ի Ք Ա Ղ Ա Ք Ա Յ Ի Ն Հ Ա Մ Ա Յ Ն Ք Ի Ա Վ Ա Գ Ա Ն Ի

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), Ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
15-Ը ՓԵՏՐՎԱՐԻ 2017 Թ N 07-Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

,,Տեղական ինքնակառավարման մասին,, ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ, 35-րդ հոդվածի 1-ին կետի 3-րդ մասերի պահանջներին համապատասխան՝ Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի 2017-2021 թթ զարգացման հնգամյա ծրագիրը՝

համաձայն N1 հավելվածի:

Ընդունել ի գիտություն, որ համայնքի զարգացման ծրագիրը մշակվել է՝ ելնելով համայնքում առկա խնդիրների լուծման և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավման անհրաժեշտությունից, որոնք նպատակաուղղված են բնակչության կյանքի որակի բարելավմանը և համայնքի կենսագործունեության ու համաչափ զարգացման ապահովմանը:

Նպատակն է՝ բյուջեի սուղ միջոցների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմամբ, գործարարների ու դոնորական կազմակերպությունների հնարավորությունների ներգրավմամբ և ՀՀ Կառավարության օժանդակությամբ հետևողականորեն ապահովել համայնքային խնդիրների լուծումը և համաչափ զարգացումը:

Պարտավորեցնել համայնքի ղեկավարին՝

ա/. Ապահովել օրենքով ՏԻՄ-երին վերապահված սեփական լիազորությունների ամբողջական ու լիարժեք իրականացումը՝ համայնքի ֆինանսական հնարավորությունների ապահովման գործում:

Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ մասնագետների աշխատանքի արդյունավետության բարձրացման, տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման, ինչպես նաև հարկային ավելի խիստ ու արդյունավետ համակարգի ու մոտեցումների ներդրմամբ:

բ/. Մոբիլիզացնել համայնքապետարանի աշխատակազմի, համայնքային բյուջետային հիմնարկների, համայնքում գործող կազմակերպությունների, դոնոր կազմակերպությունների, գործարարների և բնակիչների ուժերը՝ ծրագրով նախատեսված միջոցառումների կատարմանը պատշաճորեն աջակցելու համար:

գ/.Ապահովել համայնքի զարգացման ծրագրի հրապարակայնությունը, կատարման ընթացքի մասին պարբերաբար տեղեկացնել բնակչությանը:

4.Ավագանու խնդիրը համարել անհրաժեշտ օգնություն և աջակցություն ցուցաբերելու համայնքի ղեկավարին՝ զարգացման ծրագրի իրականացման գործում, նպաստել համայնքի բնականոն զարգացմանը, բնակչության կյանքի պայմանների բարելավմանը, սոցիալ տնտեսական խնդիրների լուծմանը:

5.Զարգացման ծրագրի կատարման ընթացքին անրադառնալ տարեկան հաշվետվություններում:

6.Սույն որոշման կատարման պատասխանատվությունը դնել համայնքի ղեկավարի վրա:

Ավագանի՝ Կողմ (10), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Արկադի Ալեքսանյան
Արսեն Ազիզյան
Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Ռոման Հակոբյան
Մորիս Սարիբեկյան
Մուշեղ Տոնոյան
Ասատուր Քոչարյան
Արթուր Փարվանյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1. Համայնքի ղեկավարի ուղերձը

2.. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1.Համայնքի ընդհանուր նկարագրություն

2.2.Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակ

2.3.Համայնքում իրականացվող ծրագրեր

2.4.Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

2.5.Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

2.6.Համայնքի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1.Համայնքի զարգացման տեսլական

3.2.Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

4. ՀՀԶԾ ֆինանսավորում

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՒՂԵՐՁԸ՝

Ապարանի համայնքի 2017-2021 թթ հնգամյա զարգացման ծրագիրը համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական և մարդկային ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ամբողջական փաստաթուղթ է, որը ենթադրում է համայնքի հիմնախնդիրների արդյունավետ լուծում և համայնքի տեսլականի իրականացում:

Համայնքի զարգացման ծրագիրը մշակվել է՝ ելնելով համայնքում առկա խնդիրների լուծման և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավման անհրաժեշտությունից, որոնք նպատակաուղղված են բնակչության կյանքի որակի բարելավմանը և համայնքի կենսագործունեու-թյան ու համաչափ զարգացման ապահովմանը:

Ծրագրի հիմքում դրված են զարգացմանը նպաստող հիմնարար սկզբունքներ, առանց որոնց պահպանման ու ավելի խորացման, անհնարին է ապահովել անհրաժեշտ զարգացում, դրանք են՝

- ✓ համայնքում քաղաքացիական համերաշխության և հանդուրժողականության ցանկալի միջավայրի ձևավորումը,
- ✓ բնակչության շրջանում համայնքի զարգացմանն ուղղված՝ գործարար, շահագրգիռ և փոխհամա-գործակցված միջավայրի ձևավորումը,
- ✓ համայնքի ֆինանսական կարողությունների ամրապնդումն ու զարգացումը,
- ✓ համայնքային կառույցների գործունեության արդյունավետության ու թափանցիկության ապահովումը:

Մեր նպատակն է՝ բյուջեի սուղ միջոցների առավել նպատակային և արդյունավետ օգտագործմամբ, գործարարների ու դոնորական կազմակերպությունների հնարավորությունների ներգրավմամբ և ՀՀ Կառավարության օժանդակությամբ հետևողականորեն ապահովել համայնքային խնդիրների լուծումը և համաչափ զարգացումը:

Համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

1.Ապահովել համայնքի կենսագործունեության բոլոր օղակների դինամիկ զարգացումը

2.Բարձրացնել բնակչությանը մատուցվող համայնքային ծառայությունների որակն ու մակարդակը:

3.Աշխուժացնել համայնքի կրթական, մշակութային, մարզական և հասարակական կյանքը, նրանցում լայնորեն ներգրավելով ավելի մեծ թվով պատանիների ու աղջիկների, երիտասարդների:
Հատուկ հոգացություն ցուցաբերել կրթական, մշակութային և մարզական օջախների վերազինման և նպատակային գործունեության նկատմամբ:

4.Իրականացնել համայնքային ենթակառուցվածքների պահպանման, շահագործման, նորոգման, գույքային վերազինման աշխատանքներ:

5.Կապիտալ ներդրումներ կատարել բնակարանային- կոմունալ տնտեսության, բարեկարգման, աղբահանության և սանիտարիայի պատշաճ վիճակի ապահովման, կանաչ գոտիների և զբոսայգի-ների կառուցապատման, ներհամայնքային ճանապարհների բարեկարգման, արտաքին լուսավորու-թյան ապահովման բնագավառներում:

6.Նպաստել փոքր և միջին բիզնեսի զարգացմանը, նոր աշխատատեղերի ստեղծմանը:

7.Հետևողականություն դրսևորել համայնքի բնակչության և տնտեսվարող սուբյեկտների իրավունքների ու օրինական շահերի պաշտպանության ուղղությամբ:

8.Գյուղատնտեսությամբ զբաղվողների համար ստեղծել նպաստավոր պայմաններ:

9.Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր, նպաստել պատերազմի վետերանների, զոհվածների ընտանիքների, հաշմանդամների, սոցիալապես խիստ անապահով ընտանիքների, ծերերի կյանքի պայմանների բարելավմանը:

10. Օրենքների և կարգուկանոնի գերակայության ապահովում, սոցիալական արդարության սկզբունքների ամրապնդում, քաղաքացիների հոգսերի նկատմամբ հոգատար վերաբերմունք:

Դիմում եմ համայնքի բնակչությանը, ավագանուն, համայնքային կազմակերպություններին, քաղաքում գտնվող բոլոր կազմակերպություններին ու գործարարներին. շահագրգիռ մոտեցում ցուցաբերելու համայնքի 2017-20121 թթ զարգացման ծրագիրը կյանքի կոչելու նկատմամբ:

2.ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2.1.Համայնքի ընդհանուր նկարագրություն

Ապարանի համայնքը գտնվում է Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզում:
Նախկինում ունեցել է Քասախ և Բաշ - Աբարան անվանումները:
Ապարան է վերանվանվել 01.01.1935թ.:
Ապարանը եղել է պատմական Հայաստանի Նիգ գավառի կենտրոնը՝ Գնթունյաց նախարարական տան նստավայրը, որտեղ նրանք 4-րդ դարում կառուցել են մինչև այժմ կանգուն և գործող Քասաղի բազիլիկ Սուրբ Խաչ եկեղեցին:
Ներկայիս ապարանցիների նախնիները այստեղ են եկել 1828-1830թթ.՝ Մշո,Ղարսի,Վանի, Արդահանի, Էրզրումի տարբեր բնակավայրերից:
Ապարանը գտնվում է Քասախ գետի ավազանի վերին հատվածում՝ Արագած լեռան և Ծաղկունյաց լեռնաշղթայի միջև, ծովի մակերևույթից 2050 մ բարձրության վրա:
Համայնքի վարչական տարածքը կազմում է 3772,8 հա, 435 հա-ի վրա տեղակայցած է քաղաքը:
Ապարանը մայրաքաղաք Երևանից գտնվում է 55 կմ, իսկ մարզկենտրոն Աշտարակից՝ 35 կմ հեռավորության վրա: Ապարանով է անցնում միջպետական Մ-3 ավտոմայրուղին:
Ունի խմելաջրի մատակարարման և ջրահեռացման կենտրոնացված համակարգեր, գազաֆիկացված է, բավարար է տրանսպորտային կապը մայրաքաղաքի հետ:
Բնակչությունը զբաղված է հողագործությամբ և անասնապահությամբ, փոքր և միջին բիզնեսով, սոցիալ-ծառայողական ոլորտի տարբեր աշխատանքներով:
Քաղաքում են տեղակայված պետական կառավարման տարբեր ստորաբաժանումներ:
Բարձրադիր Ապարանը իր լեռնատափաստանային բուսականությամբ, զով ու բուժիչ բնակլիմայական պայմաններով հաճելի բնակավայր է:
Ապարանում ձմեռը ցրտաշունչ է, միջին ջերմաստիճանը կազմում է -10-ից -30 աստիճան:
Քաղաքը գտնվում է անտառամերձ գոտում, ունի բազմաթիվ ձեռակերտ և անձեռակերտ հուշարձաններ, որոնք տուրիզմի զարգացման լավագույն հենք են հանդիսանում:
Ապարանը նշանավոր է Բաշ Ապարանի 1918 թ հերոսամարտով, որում թուրք զավթիչների դեմ տարած փառահեղ հաղթանակը իր կարևոր դերն է ունեցել Հայոց պետականության պահպանման ու գոյատևման գործում: Նշանավոր ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով և բնակչության կողմից կառուցված ,,Վերծննունդ” հուշահամալիրի տարածքում ամեն տարի մայիսի 28-ին տոնվում է որպես քաղաքի վերածննդի օր:
Ապարանցին հպարտանում է իր նախնիների հերոսական անցյալով, ապագան կերտող նրա մարդկանցով ու ավանդույթներով:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հ/Հ	Ժողովրդագրական տվյալներ	Թվաքանակ	Այդ թվում՝	
			տղամարդ	կին
1	Տնային տնտեսություններ /ընտանիք/	2004	x	x
2	Բնակչություն	7768	3972	3796
3	Բնակչության տարիքային կազմը, այդ թվում՝			
-	0-6 տարեկան	620	350	270
-	7-18 տարեկան	1152	640	512
-	18-63 տարեկան	4716	2332	2384
-	63 տարեկանից բարձր	1280	650	630
4	Աշխատունակ բնակչություն	4716	2310	2406
-	Նրանցից՝ ունեն հիմնական աշխատանք	1482	710	772
5	Թոշակառուներ	1401	660	741
6	Հաշմանդամներ	610	280	330
7	Միակողմանի ծնողազրկուրկ երեխաներ	30	14	16
8	Երկկողմանի ծնողազուրկ երեխաներ	1	1	0
9	Պատերազմի վետերաններ	15	x	x
10	Զոհվածների ընտանիքներ	22	x	x
11	Անապահովության համակարգում հաշվառված ընտանիքներ	460	x	x
-	Նրանցից՝ անապահովության նպաստառու ընտանիք	325	x	x

ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԸ

Հողատեսքեր	Հեկտար
Ընդհանուր վարչական տարածք	3772,80
Այդ թվում՝	
Բնակավայրի հողեր	435,17
Այդ թվում՝ տնամերձ հողամասեր	239,54
Հասարակականա կառուցապատման	21,71
Արտադրական նշանակության հողեր	32,49
Հասարակական նշանակության հողեր	21,71
Գյուղատնտեսական նշանակության հողեր	3157,66
Նրանցից՝ քաղաքացիների սեփականության հողեր	814,42
Պետական ֆոնդի հողեր	956,40
Հատուկ նշանակության հողեր	4,23
Ջրային ֆոնդի հողեր	13,75
Անտառային հողեր	83,03
Հողերի սեփականաշնորհման մեկ հողաբաժնի չափը՝	0,39

2.2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿ

Համայնքի տարեկան բյուջե	ՀՀ դրամ /Հազար/	%
Համայնքի 2017 թ տարեկան բյուջեն	179429,5	
Բյուջեում սեփական եկամուտները	62000,0	34,6

2017 Թ ԲՅՈՒՋԵԻ ԳՈՅԱՑՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ՝

եկամտատեսակներ	2016 թ ՀՀ ԴՐԱՄ /ՄԼՆ/	2017 թ ՀՀ ԴՐԱՄ /ՄԼՆ/	
ՀՀ կառավարության կողմից տրվող դոտացիա	105.926,8	107.875,8	+1.949,0
ՀՀ կառավաության կողմից տրվող այլ դոտացիա	17.133,0	0	-17.133,0
ՀՀԿ կողմից արվեստի դպրոցին տրվող սուբվենցիա	4001,0	4001,0	
Համայնքի վարչական մասով սեփական եկամուտներ	56.000,0	62.000,0	+6.000,0
ՔԿԱԳ բաժնին տրվող սուբվենցիա	5.552,7	5.552,7	
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	188.613,5	179.429,5	-9.184,0

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ՝

	Անվանումը	Աշխատողների թվաքանակը	Սովորողների /հաճախողների, սաների/ թիվը	Միջին ընդհանուր աշխատավարձ
1	Համայնքապետարան	27	x	83.000
2	Թիվ 1 մանկապարտեզ	11	105	57.500
3	Թիվ 2 մանկապարտեզ	11	90	57.500
4	Արվեստի դպրոց	23	180	62.000
5	Մարզադպրոց	13	125	53.000
6	Մշակույթի կենտրոն	13	160	56.000
7	Գրադարան	9	4200	51.000
8	Մանկական կենտրոն	11	80	52.000
9	Կոմունալ ծառայություն	14	--	65.500
	ԸՆԴԱՄԵՆԸ՝	132		59.700

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Հ/հ	Կառույցի անվանումը	Հասցեն	Կառուցման տարի	Մակե-րես- ՔՄ	Վիճակի գնահատում	Վերանորոգ-ման կամ նոր շենքի կարիք
1.	Համայնքապետարանի վարչական շենք	Բաղրամյան 26	1971	2600	Բավարար	ՈՒնի
2.	Մշակույթի կենտրոն	Գ.Նժդեհի 4/1հարկ	2011	1200	Լավ	Չունի
3	Մանկական կենտրոն	Գ.Նժդեհի 4/2հարկ	2011	800	Լավ	Չունի
4	Գրադարան	Գ.Նժդեհի 4/3հարկ	1968	900	Լավ	Չունի
5	Արվեստի դպրոց	Գ.Նժդեհի 12	1969	850	Բավարար	ՈՒնի
6	Մարզադպրոց	Գ.Նժդեհի 4/1	1954	600	Հարմարեցված	ՈՒնի
7	Թիվ 1 մանկապարտեզ	Գայի 5/1-ին հարկ	1980	230	Հարմարեցված	Նոր շենքի
8	Թիվ 2 մանկապարտեզ	Բաղրամյան 26/նկ	1971	220	Հարմարեցված	Նոր շենքի
9	Կոմունալ ծառայություն	Բաղրամյան 26	1971	50	Հարմարեցված	Նոր շենքի

ՀԱ ՄԱ ՅՆ

ՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

հ/հ	Կառուցվածքների անվանումը	Չափի միավոր	Քանակ/ մակերես	Նշումներ
1	Մշակույթի պալատի կիսակառույց շենք	Հատ/քմ	1/6708.24	Նվիրաբերված է Մայր Աթոռին
2	Վարչական շենք Գայի 9/1 հասցեում	Հատ/քմ	1/220.83	Նվիրաբերված է դատախազությանը
3	Գրադարանի նախկին շենք	Հատ/քմ	1/420	

1	Մարզադաշտ /ֆուտբոլի/	Հատ/քմ	1/12640	
2	Քաղաքային զբոսայգի	Հատ/քմ	1/14592	
3	,,Վերածնունդ,, հուշահամալիր	Հատ/քմ	1/60000	
4	Զոհվածների պանթեոն՝ խաչքարով և հուշաղբյուրով	Հատ/քմ	1/200	
5	,,Մայրական ձեռքեր,, հուշաղբյուր	Հատ	1	
6	,,Գոգռան աղբյուր,, հուշաղբյուր՝ հանգստի գոտիով	Հատ/քմ	1/1000	
7	Տիգրան Պետրոսյանի արձան և պուրակ	Հատ/քմ	1/500	
8	Զորավար Դրոյի կիսանդրի	Հատ	1	
9	Զորավար Ջալալյանի կիսանդրի	Հատ	1	
10	,,Սիրո աղբյուր,, հուշաղբյուր	Հատ	1	
11	Կանգառ	Հատ/քմ	2/30	
12	Կամուրջներ	Հատ	7	
13	Քաղաքի մուտքի ցուցանակ	Հատ	1	
14	Քաղաքի մուտքի ցուցանակ՝ լուսային	Հատ	1	
15	Ներքաղաքային ճանապարհներ	Կմ	32	
16	Բնակելի շենքերի ջեռուցման կաթսայատուն	Հատ	7	
17	Քաղաքային գերեզմանատներ	Հատ/քմ	4/41240	
18	Սելավատարներ	Հատ/մ	7/6000	
19	Աղբավայր	Հա	5,7	

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐ՝

		քանակը, հատ	Ընդհանուր բնակելի մակերեսը, մ²	Բնակչություն /մարդ/
	Շենքերի քանակը	**26**	**29384**	
1	**Ընդամենը բնակարաններ**	**804**	**29384**	
1.1	1 սենյականոց բնակարաններ	150	3080	
1.2	2 սենյականոց բնակարաններ	250	7893	
1.3	3 սենյականոց բնակարաններ	313	13510	
1.4	4 և ավելի սենյականոց բնակարան	91	4901	
2	**Շենքերի կառուցման ժամանակահատվածը՝**			
2.1	Կառուցված են 10 տարի առաջ	0	0	
2.2	11-20 տարի առաջ	0	0	
2.3	21-50 տարի առաջ	21	27775	
2.4	50 և ավելի տարի առաջ	5	1609	
3	**Բ/շենքերի ունեցած խնդիրները՝**			
3.1	3-րդ կարգի վթարային	9		715
3.2	4-րդ կարգի վթարային	2		200
3.3	Տանիքի խնդիր	6		540
3.4	Մուտքերի վերանորոգման խնդիր	26		3250
3.5	Բակերի ասֆալտապատման խնդիր	26		3250

ԱՌԱՆՁՆԱՏՆԵՐ՝

		Քանակ	Ընդհանուր բնակելի Մակերես - քմ	Բնակչություն /մարդ/
1	**Առանձնատների քանակը**	**1200**	**156000**	
2	Վթարայնությունը՝			
2.1	4-րդ կարգի՝	10		56
2.2	3-րդ կարգի՝	15		75

Արդյունաբերական ձեռնարկությունները, արդյունաբերական արտադրանքը, սպառման շուկաները				
N	Անվանում	Քա-նակ	արդյունաբերական արտադրանքը	Սպառ շուկա
1	,,Նիգ գործարան'' ՍՊԸ	1	Էլեկտրոնային միացման դետալներ	ՌԴ
2	,,Ապարանի պանրի գործարան,,ՓԲԸ	1	Կաթնամթերքի 10 անուն տեսականի	ՀՀ
3	,,Գնթունիք'' ՍՊԸ	1	Հացամթերքի և հրուշակեղենի 300 տեսականի	ՀՀ
4	Հացամթերքի արտադրություն	6	Հացամթերք	ՀՀ
5	Լիմոնադի արտադրություն	2	Լիմոնադի տեսականիներ	ՀՀ
6	Եվրոպական նմուշի դռների և պատուհանների արտադրություն	2	Տարբեր տեսականիներ	ՀՀ
7	Կաթնամթերքի վերամշակման արտադրություն	3	Տարբեր տեսականիներ	ՀՀ

Ծառայություններ իրականացնող ձեռնարկությունները, մատուցվող ծառայությունները			
N	Անվանում	Քանակ	Մատուցվող ծառայություններ
1	Առևտրի օբյեկտներ /խանութներ/	54	Մթերք,հագուստ,ավտոպահետամաս, շինանյութ, ծաղիկ, գրենական պիտույք
2	Համակարգչային ծառայություն և քսերոքս	2	Համակարգիչների վաճառք և տեխնիկական սպասարկում
3	Գազի և վառելանյութի լցակայան	4	Բնական սեղմված գազ և վառելանյութ
4	Հանրային սնունդ	6	Սննդի իրականացում և մատուցում
5	Գեղեցկության սրահ	4	Տղամարդու և կանացի վարսահարդաում
6	Դեղատուն	6	Դեղորայքի վաճառք
7	Տրանսպորտային ծառայություն	5	Ապարան-Երևան միկրոավտոբուսի երթու-ղի, 4 տաքսի ծառայություն
8	Հանդիսությունների սրահ	3	Տարբեր ծիսակատարություններ
9	Հեռախոսային կապի օպերատոր	4	Արմենտել, Բիլայն, Վիվասել , Յուքոմ
10	Բանկեր, վարկային կազմակերպություններ	4/4	Արդշինինվեստ, Հայբիզնես, ՎՏԲ, ԱԿԲԱ, Արեգակ, Ֆինքա, Կամուրջ, Սեյֆ
11	Փոստի ծառայություն	1	Ընդհանուր ծառայություններ

Ծառայություններ իրականացնող կազմակերպություններ, մատուցվող ծառայություններ				
N	Անվանում	Մատուցվող ծառայություններ	Քանակ Խմ,կվտ,	Սպասարկվող Բաժանորդ
1	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ տեղամաս	Գազի մատակարարում և սպասարկում	1.293.424	1588
2	Էլ. ցանցի տեղամաս	Էլեկտրոէներգիայի մատակա-րարում և սպասարկում	3.308.000	1600
3	,,ՎԵՈԼԱ'' ՓԲԸ տեղամաս	Խմելու ջրի և ջրահեռացման մատակարարումև սպասարկում	1.212.000	1570

Գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, սպառման շուկան			
N	Արտադրանքի անվանում	Ծավալները /ցենտներ/	Սպառման շուկան
1	Հացահատիկ	1350	Ընտանիքի կարիքների
2	Կարտոֆիլ	2940	Ընտանիքի կարիքների
3	Բանջարանոցային մշակաբույսեր	300	Ընտանիքի կարիքների
4	Միրգ /խնձոր, տանձ, բալ/	10000	Ընտանիքի կարիքների և վաճառքի

Զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ			
N	Անվանումը	Հեղինակ	Կառուցման տարեթիվ
1	,,Սուրբ Խաչ,, բազիլիկ եկեղեցի		4-րդ դար
2	Մարիամ Աստվածածին եկեղեցի		19-րդ դար
3	,,Վերածնունդ'' հուշահամալիր	Ռաֆայել Իսրայելյան	1979 թ
4	Զորավար Դրոյի գերեզման		2001 թ
5	Ապարանի բերդ		Մ.թ.ա. 2-րդ հազ.
6	Քարանձավ	Բնական	
7	Սիրո աղբյուր	Աշոտ Սաֆարյան	1978 թ
8	Գոգռան աղբյուր	Ռաֆայել Իսրայելյան	1946 թ

Դպրոցական, նախադպրոցական և արտադպրոցական կրթական հաստատություններ, ԲՈՒՀ-եր			
N	Անվանումը	Գործող խմբերի /դասարանների/ քանակը	Սովորող /ընդգրկված/ երեխաների թիվը
1	Ապարանի ֆիզիկամաթեմատիկական ավագ դպրոց	15	142
2	Ապարանի թիվ 1 հիմնական դպրոց	10	221
3	Ապարանի թից 2 հիմնական դպրոց	19	486
4	Ապարանի թիվ 1 մանկապարտեզ	3	105
5	Ապարանի թիվ 2 մանկապարտեզ	3	90
6	Ապարանի արվեստի դպրոց	11	180
7	Ապարանի մանկապատանեկան մարզադպրոց	8	125
8	Ապարանի մանկապատանեկան կենտրոն	7	80

Մշակութային հիմնարկներ				
N	Անվանում	Խմբերի քանակը	Ընդգրկված երեխաներ թիվը	Օգտվողների Քանակը
1	Ապարանի մշակույթի կենտրոն	7	160	Համայնքի բնակիչներ
2	Ապարանի քաղաքային գրադարան		610	1250

Առողջապահական հիմնարկներ			
N	Անվանում	Մահճակալ տեղերի քանակը /թիվը/	Տարեկան այցելուների քանակը
1	Ապարանի բժշկական կենտրոն	60	1400
2	Ապարանի բժշկական կենտրոնի պոլիկլինիկա	-	20.000
3	Ատամնաբուժարան	4	5.600

ԱՊԱՐԱՆ Համայնքում իրականացվող ծրագրեր

/ 2017-2021 ԹԹ /

	Ծրագրի անվանումը	Չափի միավոր	Աշխատանքի ծավալ, քանակ	Ծրագրի արժեքը Մլն. դրամ	Ծրագրի կատարումն ըստ տարիների				
					2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
	2	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	
1	Մանկապարտեզի շենքի վերակառուցման ավարտում և շահագործում	ՔՄ	918, 6	142,8	142,8	0	0	0	0
2	Թիվ 2 մանկապարտեզին կից կառույցի իրականացում /13x6 մետր-չափ/	ՔՄ	72	20,0	0	20,0	0	0	0
3	Բազմաբնակարանային նոր շենքի կառուցման շարունակականության ապահովում	ՔՄ	3800	765,0	70,0	200,0	300,0	195,0	0
4	Արոտավայրերի ջրարբիացում	ԳԾՄ	2500	80,0	80,0	0	0	0	0
5	Փողոցներում գիշերային լուսավորության անցկացում	ԳԾՄ	10000	17,0	4,0	3,0	3,0	3,0	4,0
6	Բաղրամյան 8, 23, 46, 49, Նժդեհի 10 և Գայի 7 շենքերի տանիքների հիմնանորոգում	ՔՄ	4200	50,4	0	13,2	13,2	24,0	0
7	Փողոցների ասֆալտի փոսային նորոգումներ	ՔՄ	5000	30,0	6,0	6,0	6,0	6,0	6,0
8	Ներքաղաքային փողոցների ասվալտապատում	ՔՄ	30.000	240,0	0	60,0	60,0	60,0	60,0
9	Գրունտային փողոցներ խճալցում և բարեկարգում	ՔՄ	20.000	5,0	1,0	1,0	1,0	1,0	1,0
10	Զբոսայգու կառուցապատում	ՔՄ	14.500	20,0	4,0	16,0	0	0	0
11	Գերեզմանատների պարսպապատում	ԳԾՄ	2.000	20,0	4,0	8,0	8,0	0	0
12	Ոռոգման ներհամայնքային համակարգի կառուցում	ԳԾՄ	8.000	80,0	0	0	40,0	40,0	0
13	Սելավատարի կառուցապատ	ԳԾՄ	1.500	75,0	0	75.0	0	0	0
14	Ջրահեռացման համակարգի կառուցում	ԳԾՄ	8.000	80,0	0	20,0	20,0	20,0	20,0
15	Թիվ 1 դպրոցի վերանորոգում	ՔՄ	3.000	60,0	0	60,0	0	0	0
16	Արվեստի դպրոցի նորոգում	ՔՄ	750	18,0	1,0	17,0	0	0	0
17	Մարզադաշտիվերակառուցում	Կոմպլ	1	50,0	25,0	25,0	0	0	0
18	Համայնքապետարանի շենքի նորոգում	ՔՄ	200	2,0	2,0	0	0	0	0
19	Հացահավաք կոմբայնի ձեռք բերում	հատ	1	35,0	35,0	0	0	0	0
20	Աղբատար ավտոմեքենայի ձեռք բերում	հատ	1	13,0	13,0	0	0	0	0
21	Համայնքի աղբավայրի կառուցապատում	ՀԱ	5,0	5,0	0	2,0	2,0	1,0	0
				1808,2	387,8	526,2	453,2	350,0	91,0

Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի ֆինանսական իրավիճակը կանխատեսված է առաջիկա 5 տարիների կտրվածքով և հստակ երևում է, որ միայն համայնքի բյուջեի միջոցներով հնգամյա ծրագրում նախատեսվող աշխատանքների իրականացումը իրատեսական չէ:
Այն իրատեսական չէ նաև ՀՀկառավարության կողմից հատկացվելիք դոտացիայի և պատվիրակված լիազորությունների իրականացման համար հատկացվող սուբվենցիաների պարագայում:
Համայնքի սեփական եկամուտները չեն ապահովում համայնքապետարանի և համայնքային ենթակայության 8 կառույցների աշխատակազմերի աշխատավարձերի վճարումը, չնայած որ կառույցներում աշխատակազմերը ձևավորված են առավելապես մինիմումի սահմաններում՝ ըստ
խիստ անհրաժեշտության և կարիքի:
Համայնքի առջև խնդիր է ծառացած ակտիվացնել համագործակցությունը դոնորական կազմակերպությունների հետ, որի արդյունքում հնգամյա ծրագրով նախատեսված առանձին խնդիրներ կլուծվեն դոնորներից ներգրավված միջոցներով:
Համայնքի կենսագործունեության ապահովման ուղղությամբ որոշ խնդիրների լուծման գործում արդյունավետ կլինի նաև համայնքի բնակիչների ուժերի և հնարավորությունների օգտագործումը:
Մոտեցումը՝ եթե թաղամասն ունի հրատապ խնդիր և այն պահանջում է անհապաղ լուծում, որի լուծման համար համայնքն այսօր չունի բավարար հնարավորություն, ուրեմն պետք է համատեղենք ուժերն՝ այն լուծելու համար:
Անհրաժեշտ հետևողականության և պահանջկոտության ուժեղացման խնդիրներ կան տեղական հարկերի մուծումից խուսափողներին օրենքի դաշտ բերելու և նրանց նկատմամբ վարչարարություն կիրառելու ուղղությամբ: Լուծումներ պետք է գտնվեն նաև համայնքից բացակայողներին գտնելու և հարկերը գանձելու, ինչպես նաև մահացածների ժառանգությունների բացման ուղղությամբ:
Անհրաժեշտ է հստակ խնդիր դնել, սահմանել կոնկրետ ժամկետներ՝ դեռևս մեծ թիվ կազմող ապառքների աստիճանական մարման ուղղությամբ:
Անկախ համայնքի ֆինանսական ապահովման և խնդիրների լուծման ուղղությամբ ձեռնարկվելիք
քայլերի ու միջոցների որոնման, կարևորագույն և ճիշտ ելքը՝ պետության կողմից համայնքներին ըստ ոլորտների ֆինանսավորման ապահովումն է:
,,Տեղական ինքնակառավարման Եվրոպական խարտիայի" 9-րդ հոդվածի 4-րդ կետը սահմանել է, որ այն ֆինանսական համակարգերը, որոնց վրա հիմնվում են ՏԻՄ-երի միջոցները, պետք է բավականին բազմազան և ճկուն լինեն, որպեսզի համաքայլ ընթանան ծախսերի փոփոխություն-ներին, որոնք ծագում են տեղական ինքնակառավարումից ծագող խնդիրները իրականացնելիս: Արդյունքում՝ պետության կողմից ՏԻՄ-երի ֆինանսական կարողությունների ամրապնդման և ֆինանսական անկախության աստիճանի բարձրացման նպատակով՝ անհրաժեշտ է մշակել տեղական ինքնակառավարման մարմիններում ներդրումային և զարգացման ծրագրերի իրականացման մասին օրենքի նախագիծ, որը կարգորոշումներ կսահմանի պետության կողմից տրվող կապիտալ սուբվենցիաների, դրամաշնորհների և

դոնորների կողմից համայնքներում իրականացվող ծրագրերի (ինստիտուցիոնալ հետևանք ունեցող) վերաբերյալ, որը հնարավորություն կտա նաև ընթացակարգեր և մեթոդաբանություն սահմանել նշված միջոցների նպատակային օգտագործման և երկարաժամկետ հեռանկարում՝ տնտեսական ետգնման բարձր նորմաներ ապահովելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ՄՈՒՏՔԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

		2016թ Փաստ.	2017թ կանխ.	2018թ կանխ.	2019թ կանխ.	2020թ կանխ.	2021թ կանխ.
		Մլն. դրամ	Մլն. դրամ	Մլն. դրամ	Մլն. դրամ	Մլն. դրամ	Մլն. դրամ
	ԸՆԴԱՄԵՆԸ ՄՈՒՏՔԵՐ	*190,1379*	*179,4295*	*199,920*	*211,665*	*221,0*	*230,7*
	ՈՐԻՑ՝						
1	Պաշտոնական դրամաշնորհներ /դոտացիա, սուբվենցիա/	132,6135	111,8768	131,3673	141,1123	148,4473	156,1473
2	Պատվիրակված լիազորություն	5552,7	5552,7	5552,7	5552,7	5552,7	5552,7
2	*Սեփական եկամուտներ՝*	*57,5244*	*62,0*	*63,0*	*65,0*	*67,0*	*69,0*
	Այդ թվում՝						
2/1	Հողի հարկ	8,0549	8,0	8,3	8,5	8,7	9,0
2/2	Հողի և գույքի վարձակալություն	3,541	3,8	4,0	4,2	4,3	4,5
2/3	Գույքահարկ	23,387	25,5	25,0	25,7	26,5	27,0
2/4	Տեղական տուրքեր	2,8095	3,2	3,4	3,5	3,6	3,7
2/5	Պետական տուրքեր	2,118	2,4	2,4	2,4	2,4	2,4
2/6	Ծառայությունների մատուցման վարձավճարներ	17,0171	17,3	17,9	18,5	19,0	20,0
2/7	Այլ եկամուտներ	0,5269	1,8	2,0	2,2	2,5	2,4

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԵՎ ՀՈԱԿ –ՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

	Կազմակերպության անվանումը	2016թ Փաստ.	2017թ կանխ.	2018թ կանխ.	2019թ կանխ.	2020թ կանխ.	2021թ կանխ.
		Մլն.դրամ	Մլն.դրամ	Մլն.դրամ	Մլն.դրամ	Մլն.դրամ	Մլն.դրամ
1	Համայնքապետարան	43802,0	42419,0	44000,0	45000,0	46000,0	47000,0
2	Թիվ 1 մանկապարտեզ	13620,0	14800,0	16000,0	17000,0	17500,0	18000,0
3	Թիվ 2 մանկապարտեզ	12421,5	13800,0	15000,0	16000,0	16500,0	17000,0
4	Արվեստի դպրոց	25142,8	24470,0	25500,0	26000,0	26500,0	27000,0
5	Մարզադպրոց	11350,0	11280,0	12000,0	12500,0	13000,0	13500,0
6	Մշակույթի կենտրոն	15655,0	13505,0	14500,0	15000,0	15500,0	16000,0
7	Գրադարան	8117,2	7820,0	8200,0	8500,0	8700,0	9000,0
8	Մանկապատանեկան կենտրոն	10235,0	9545,0	10000,0	10500,0	10800	11000,0
9	Կոմունալ ծառայություն	30870,0	24450,0	26500,0	27500,0	29000,0	30000,0
	ԸՆԴԱՄԵՆԸ	171213,5	162089,0	171700,0	178000,0	183500,0	188500,0

Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Համայնքի զարգացման համար խոչընդոտներ և դժվարություններ են հանդիսանում ֆինանսական միջոցների անբավությունը, աղքատության բարձր մակարդակը, որը ենթադրում է նաև տեղական հարկերի վճարման անբավարար մակարդակ և ապառքների կուտակում:
Պետության կողմից համայնքին դոտացիա հատկացնելիս հաշվի չի առնվում համայնքի բարձր լեռնայնությունը, բնակլիմայական խիստ պայմանները, ոլորտային ենթակառուցվածքների պահան-
ջարկը և գործունեության անհրաժեշտությունը, ինչպես նաև դոտացիայի բանաձևում բնակչության թվաքանակը պետական ռեգիստրում հաշվառված թվաքանակով արտահայտումը:
Կա որակյալ կադրերի խիստ պակաս, որի պատճառը ցածր աշխատավարձն է:
Համայնքապետարանի աշխատակազմում և Համայնքային ենթակայության 8 կազմակերպութ-յուններում աշխատող 132 անձանցից 94-ն ունեն 0,75 հաստիքային միավոր, միջին աշխատավարձը կազմում է՝ ընդհանուրը՝ 84.000 դրամ, մաքուրը՝ 59.700 դրամ:
Նման պարագայում էլ, աշխատավարձի ֆոնդը կազմում է համայնքի բյուջեի 72 %-ը:
Բյուջեի մնացած 28 %-ով մի կերպ ապահովվում է համայնքի կենսագործունեությունը:
Ֆոնդային բյուջեի ձևավորման գործում կան լուրջ դժվարություններ, տնամերձեր և գյուղատնտեսական նշանակության հողատարածքներ չեն վաճառվում:
Բնակլիմայական խիստ պայմանների հետևանքով բարձր է գյուղատնտեսության ռիսկայնությունը,
հողատարածքների 90 %-ը չի մշակվում, ուժեղ քամիների և կարկուտի պատճառով աճեցրած բերքը
փչանում է, հողատարածքները չեն ոռոգվում ներհամայնքային համակարգ չունենալու պատճառով:
Ջրահեռացման համակարգի 60 %-ի բացակայությունը կարող է դառնալ համաճարակների բռնկման պատճառ: Խմելաջրի և ջրահեռացման համակարգերը 18 տարի է հանձնվել են օպերատորի կառավարմանը, սակայն դրանցում էական ներդրումներ դեռևս չեն արվել:
Խմելաջրի համակարգի 65 %-ը հին են, կառուցված են 50-60 տարի առաջ և հաճախակի վթարվում են, զգալի են կորուստները, որի պատճառով էլ չի ապահովվում շուրջօրյա ջրամատակարարում:
Ցրտաշունչ ձմռանը խմելաջրի համակարգի կեսից ավելին սառչում է;
Քաղաքի ձագարաձև դիրքի պատճառով հորդառատ անձրևները ողողում են բնակարանները, իսկ
սելավատարները կառուցապատված չեն:
Խիստ անբավարար է ներհամայնքային ճանապարհների վիճակը, ասֆալտը թանկությունը համայնքի համար անհասանելի է: Ամեն տարի կապիտալ ֆոնդի զգալի մասը օգտագործվում է ասֆալտապատ նույն ճանապարհների փոսային նորոգումների համար:
1988 թ երկրաշարժի հետևանքով բազմաբնակարանային 26 շենքերից 2-ը 4-րդ կարգի, իսկ 9-ը՝

3-րդ կարգի վթարային են: Համատիրությունները չեն կայանում, շենքերի սպասարկման համար բնակչությունը ի զօրու չէ սպասարկման վարձավճարներ վճարել, որի հետևանքով խնդիրները լուծվում են համայնքային բյուջեի հաշվին: 6 շենքերի տանիքներ գտնվում են վթարային վիճակում, անձրևների հետևանքով վերին հարկերի բնակարանները մշտապես ողողվում են: Երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպման նպատակով կառուցապատման խիստ կարիք ունեն քաղաքային զբոսայգին, մարզադաշտը, արվեստի դպրոցի շենքը:
Աշխատունակ 4716 բնակիչներից 3234 ը /68,6 %/ չունեն աշխատանք:

Համայնքի ուժեղ և թույլ կողմերը, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծություն

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԿՈՂՄԵՐԸ՝

1. Համայնքը գտնվում է հանրապետության կենտրոնական մասում, միջպետական ավտոմայրուղու վրա, որը հնարավորություն է տալիս անմիջական կապ ապահովել մյուս խոշոր քաղաքների հետ:
2. Համայնքը մայրաքաղաք Երևանից գտնվում է 55 կմ, մարզկենտրոն Աշտարակից՝ 35 կմ, Գյումրիից՝ 70 կմ, Վանաձորից՝ 60 կմ հեռավորության վրա:
2.Համայնքը համարվում է Ապարանի տարածաշրջանի կենտրոն, համայնքում են տեղակայված հանրապետության պետական կառավարման մարմինների ճյուղային ստորաբաժանումները:
3. Համայնքում գործում են սպասարկման տարբեր ծառայություններ, բանկերի և վարկային կազմակերպությունների լայն ցանց, որոնք լիովին ապահովում են բնակչության պահանջները:
4. Համայնքում է տեղակայված փոքր և միջին բիզնեսի աջակցման մարզային գրասենյակը, որը օժանդակում է տարածաշրջանում փոքր և միջին բիզնեսի ներդրմանն ու զարգացմանը:
5. Համայնքը գտնվում է անտառամերձ գոտում, ունի բազմաթիվ տեսարժան վայրեր, հուշարձան- ներ, սառնորակ բնական աղբյուրներ, մաքուր օդ, չքնաղ բնություն, ձմեռային սպորտի զարգացման լավագույն պայմաններ, ինչը հնարավորություն է տալիս խթանելու տուրիզմի զարգացմանը:
6.Համայնքը կազմակերպված է, պատվախնդիր, հավատավոր ու ավանդապաշտ:
7. Օրենքների գերակայության ապահովման, սոցիալական արդարության պահպանման, քաղաքացիների հոգսերի նկատմամբ հոգատար վերաբերմունքի դրսևորման, կատարված աշխատանքների հրապարակայնության ու թափանցիկության ապահովման սկզբունքները գտնվում են համայնքապետարանի գործունեության հիմքում, այն գիտակցում է համայնքի յուրաքանչյուր բնակիչ և այդ գիտակցությամբ էլ արտահայտում իր վերաբերմունքն ու մոտեցումները համայնքապետարանի գործունեության նկատմամբ: 8. Բնակչության շրջանում ձևավորված է համայնքի զարգացմանն ուղղված՝ գործարար, շահագրգիռ և փոխհամագործակցված միջավայր:

ՀԱՄԱՅՆՔԻ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԸ՝

1.Համայնքի ֆինանսական հնարավորությունները սուղ են, որը հնարավորություն չի տալիս ինքնուրույն լուծելու դեռևս գոյություն ունեցող բազմաթիվ հոգսերն ու խնդիրները:
2.Ցածր են համայնքային աշխատողների աշխատավարձերը, հետևաբար և խնդիրներ են առաջանում համայնքային աշխատանքներում ավելի բարձրակարգ մասնագետ կադրերի ներգրավման գործում:
3.Մեծ թիվ են կազմում տեղական հարկերի գծով բնակչության պարտքերը, շատերը բացակայում են համայնքից, իսկ մահացածների ժառանգորդներն ի վիճակի չեն բացելու ժառանգություն, որով և խուսափում են հարկային պարտավորություններից:
4.Ընտանիքների 30 %-ն հաշվառված է ընտանիքի անապահովության համակարգում, որոնցից նպաստ են ստանում փաստացի բնակվող ընտանիքների 20 %-ը:
5. Սոցիալապես անապահով ընտանիքների մեծ թիվը
6. Աշխատատեղերի պակասը, գործազուրկների մեծ թիվը
7.1988 թ երկրաշարժից վթարային են դարձել բազմաբնակարան 11 շենքեր, 23 առանձնատներ, մանկապարտեզի շենքը, հյուրանոցային համալիրը, թիվ 1 դպրոցը:
8.Համայնքում շուրջ 250 երիտասարդ ընտանիքներ չունեն բնակարան, առկա են շուրջ 150 կիսակառույց բնակարաններ, որոնք երկար տարիներ չեն կառուցվում:
9.Խիստ անբարեկարգ վիճակում է ճանապարհային ցանցը, ջրահեռացման համակարգը, փողոցների 70 %-ը չունեն գիշերային լուսավորություն:
10.Ցածր է գյուղատնտեսության արդյունավետությունը, հողատարածքները չեն ոռոգվում, չկան անհրաժեշտ գյուղատնտեսական տեխնիկաներ, հողատարածքների 90%-ը չի մշակվում, շուրջ 60 ընտանիքներ հետ են վերադարձրել սեփականաշնորհված հողերը, տնամերձ և գյուղատնտեսական նշանակության հողերը չեն վաճառվում:
11.Անասնապահական մթերքների իրացման դժվարություններ
12.Համայնքային սեփականություն հանդիսացող շարժական միջոցների մեծ մասը հիմնականում ենթարկվել են ֆիզիկական և բարոյական մաշվածության:
13.Մանկապարտեզները և մարզադպրոցը տեղակայված են հարմարեցված, փոքր և խոնավ տարածքներում, որոնք չեն ապահովում բավարար նորմատիվները:
14.Երիտասարդության ազատ ժամանցի կազմակերպման նպատակով չկան անհրաժեշտ պայմաններ, զբոսայգին և մարզադաշտը գտնվում են անբարեկարգ վիճակում:
15.Համայնքը չունի կառուցապատված աղբավայր, որի հետևանով շրջակա բնությունը ենթարկվում է աղտոտման:
16.Ջրահեռացման կենտրոնացված համակարգի բացակայություն և խմելու ջրի մատակարարման ոչ բարվոք վիճակ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.Ապահովել օրենքով ՏԻՄ-երին վերապահված սեփական լիազորությունների ամբողջական ու լիարժեք իրականացումը: Բարձրացնել ՏԻՄ-երի ինքնուրույնության մակարդակը՝ մշակելով և իրականացնելով նպատակամետ ու արդյունքահեն համայնքային քաղաքականություններ, ռազմավարություններ և ծրագրեր:
2.Էականորեն բարձրացնել համայնքի բյուջեի սեփական եկամուտների հավաքագրման մակարդակը՝ ի հաշիվ մասնագետների աշխատանքի արդյունավետության բարձրացման, տեղեկատվական արդի համակարգերի ներդրման և արդյունավետ շահագործման, ինչպես նաև հարկային ավելի խիստ ու արդյունավետ համակարգի ու մոտեցումների ներդրման
3.Խթանել որակյալ մասնագետների հոսքը համայնքի աշխատակազմ և համայնքային կազմակերպություններ՝ հնարավորինս բարձրացնելով համայնքային ծառայողների և այլ աշխատողների աշխատավարձերի դրույքաչափերը
4.Էականորեն մեծացնել համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված հնարավորությունները՝ կապված համայնքի սեփականություն համարվող հողային, գույքային և ֆինանսական ռեսուրսների բազային ծավալների մեծացման և դրանց նպատակային օգտագործման հետ
5.Համայնքում նպաստել տնտեսության տարբեր ճյուղերի (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) զարգացմանը՝ օգտվելով համայնքում բնակլիմայական պայմանների, պատմամշակութային և այլ արժեքների առկայությունից
6.Համայնքում ակտիվացնել առևտրային գործունեությունը, փոքր ու միջին ձեռներեցությունը:
7.Բարձրացնել համայնքի համագործակցության մակարդակը ՀՀ պետական կառավարման մարմինների հետ՝ նպաստելով համայնքի աստիճանական զարգացմանը
8.Ակտիվացնել համագործակցությունը դոնորական կազմակերպությունների հետ
9.Հնարավորինս պատրաստ լինել ընդունելու և իրականացնելու ՏԻՄ-երին օրենքով ակնկալվող նոր սեփական և պատվիրակված լիազորություններ՝ համապատասխան ֆինանսական միջոցներով 10.Համայնքում ստեղծել լուրջ նախադրյալներ և նպաստավոր պայմաններ ժողովրդագրական աճի, սոցիալ-տնտեսական և տեղական ժողովրդավարության զարգացման համար՝ հիմնելով նոր աշխատատեղեր, ավելացնելով ընտանիքների եկամուտները և բարձրացնելով բնակչության ընդհանուր կենսամակարդակը, հաղթահարելով աղքատությունը և կանխելով արտագաղթը 11. Օպերատիվ լուծում տալ գործարարությամբ զբաղվելու ցանկություն ունեցողների կողմից բարձրացրած խնդիրներին, բոլոր հնարավորույթուններով օգնել և օժանդակել նրանց նոր աշխատատեղերի ստեղծման գործում: 12.Համայնքի ունեցած տուրիզմի նախադրյալների մասին հրապարակել հոդվածներ, բուկլետներ: Գործարարների համար ստեղծել անհրաժեշտ պայմաններ նախկին հյուրանոցային համալիրների վերականգնման ուղղությամբ:
13.Համայնքներին հատկացնել երկարատև անտոկոս վարկեր՝ զուտ զարգացման նպատակով:

ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍՊԱՌՆԱՑՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՎՏԱՆԳՆԵՐԸ

1.Համայնքի ունեցած սեփական եկամուտներով և պետության կողմից հատկացվող ֆինանսական միջոցներով հնարավոր չէ համայնքում իրականացնել խիստ հրատապ ծրագրեր:
2. Աղքատ է համայնքապետարանի և նրա ենթակա կառույցների նյութատեխնիկական բազան, նրանց հզորացումը պահանջում է ֆինանսական խոշոր միջոցների ներդրում:
3.Համայնքում մեծ թիվ են կազմում սոցիալապես անապահով ընտանիքները, միայնակ թոշակառուները, ցածր եկամուտ ունեցող ընտանիքները, աղքատությունը կազմում է շուրջ 40% , բնակչությունն անվճարունակ է
4.Բնակչության 80 %-ից ավելին բանկերում ունեն վարկեր, նրանց զգալի մասը դժվարությամբ են կարողանում ապահովել վարկերի մարումը:
5. 26 բնակելի շենքերից 11-ը և 25 առանձնատներ 3-րդ և 4-րդ կարգի վթարային են և բնակության համար վտանգավոր:
6.Համայնքի բնակիչների հարկային պարտավորությունների կատարման ոչ բավարար վիճակը և վարչարարության կիրառման լոյալ վերաբերմունքը:
7.Անհրաժեշտ ռեսուրսների անբավարարությունը, ինչպես նաև համայնքին /ՏԻՄերին/հատկացվող հստակ և նպատակային ծրագրերի հեռանկարի բացակայությունը:
8.Համայնքում հողագործությամբ զբաղվելու անհեռանկարայնությունը և բնակլիմայական խիստ պայմանները վտանգում են գյուղատնտեսության այդ ճյուղի զարգացումը
9. Բացի Երևան քաղաքից, որևէ այլ համայնք չի կարող սեփական միջոցներով ասֆալտապատել ներհամայնքային ճանապարհ, չի ներդրվում ճանապարհների բարեկարգման ավելի էժան և հասանելի հնարավորություն: Այդ ուղղությամբ պետության կողմից չկա որևէ վերաբերմունք: 10.Ջրահեռացման համակարգի 60 %-ի բացակայությունը կարող է դառնալ համաճարակների բռնկման պատճառ:
11.Քաղաքի ձագարաձև դիրքի պատճառով հորդառատ անձրևները ողողում են բնակարանները, իսկ սելավատարները կառուցապատված չեն:
12. Համայնքի աղբավայրի չկառուցապատված լինելը անկառավարելի է դարձնում շրջակա միջավայրի պահպանությունը:

Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

3.1.Համայնքի զարգացման տեսլական

Ապարանի համայնքը ՀՀՌԾ արդյունքում, հինգ տարի հետո՝ 2021 թ ակնկալվում է ունենալ

-- բարեկարգ և քաղաքային բնակավայրին վայել և համարժեք տեսք,
--բարեկարգված և լուսավորված ներհամայնքային ճանապարհներ,
--կառուցապատված կանաչ տարածքներ և հանգստի գոտիներ,
--4-րգ կարգի վթարային շենքերի բնակիչների անվտանգ կեցության խնդիրների լուծում,
--մանկապարտեզներից 1-ի շենքային պայմանների ամբողջական, իսկ 2-րդի՝ մասնակի բարելավում
--կբարելավեն համայնքային կառույցների շենքային պայմանները և գույքավորման խնդիրները,
--հողատարածքների ոռոգման և գյուղտեխնիկաների ապահովման շնորհիվ կավելանան գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները և եկամտաբերությունը,
--մասնակիրորեն կկարգավորվի ջրահեռացման համակարգը և կպակասի համաճարակային իրավիճակների վտանգը,
--գտնվելով անտառամերձ գոտում, ունենալով բազմաթիվ տեսարժան վայրեր,պատմամշակութային հուշարձաններ, սառնորակ աղբյուրներ ու չքնաղ բնություն, ձմեռային սպորտի զարգացման նպաստավոր պայմաններ, համայնքը կարող է դառնալ տուրիզմի զարգացման տարածաշրջանա-յին կենտրոն: Գործարարների հետ համագործակցության արդյունքում կվերակառուցվի նախկին հյուրանոցի շենքը և կսկսվի համապատասխան աշխատանքներ տարվել տուրիզմի ներդրմանն ու հետագա զարգացման ուղղությամբ:
--Բնակիչները կազատվեն բազմաբնակարան շենքերի տանիքների և սելավատարների վթարային վիճակի պատճառով ունեցած երկար տարիներ անհանգստացնող հոգսերից
--Երիտասարդությունը և երեխաները իրենց ազատ ժամանցը և հանգիստը կանցկացնեն կառուցա-պատված խաղահրապարակներում և մարզադաշտում, հանգստի գոտիներում
--Թիվ 1 դպրոցի նորոգման շնորհիվ կդադարի դպրոցից երեխաների արտահոսքը այլ դպրոցներ
--Աղբահանությունը ավելի կկանոնակարգվի և բնակչությունը կունենա մաքուր և կոկիկ քաղաք ու մաքուր շրջակա բնություն:
--Սոցիալական տարաբնույթ ծրագրերի իրականացման շնորհիվ սոցիալապես անապահով խավը իրեն ավելի պաշտպանված կզգա:

	2016թ Փաստ.	2017թ կանխ.%	2018թ կանխ.%	2019թ կանխ.%	2020թ կանխ.%	2021թ կանխ.%
Սեփական եկամուտներ՝	57,5244	7,8	3,5	3,5	3,5	3,0
Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին	700 /40 %/	40	35	30	25	20
Համայնքում գրանցված բնակիչ-ների թվի փոփոխությունը նախորդ տարվա համեմատ	7768	-- 1,2	0,5	1,0	1,5	2,0

3.2 Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Համայնքի սահմանված տեսլականին հասնելու համար համայնքի ռազմավարությունն է՝

1. Համայնքի համեմատական առավելությունների բացահայտում և առևտրայնացում, այդ նպատակով պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, բնակչության, տարբեր կազմակերպությունների համագործակցության շրջանակների ընդլայնում և ջանքերի մեկտեղում
2.Համայնքում էկոտուրիզմի ենթակառուցվածքների ստեղծում և զարգացում՝ գործարարների ուժերով և միջոցներով հյուրանոցային համալիրների վերականգնում, տուրիզմի ուղղությամբ անհրաժեշտ բուկլետների տարածում, հասարակական սննդի, առևտրի և կենցաղսպասարկման օբյեկտների աշխատանքի բարելավում, համապատասխան ծառայությունների պատշաճ մակարդակով մատուցման միջոցով,
3.Համայնքի սեփականություն համարվող ենթակառուցվածքների պահպանում, շահագործում, նորոգում և զարգացում,
4.Ներհամայնքային ճանապարհների և փողոցների նորոգում և բարեկարգում, ջրահեռացման և արտաքին լուսավորության համակարգերի անցկացում, ճանապարհային նշանների տեղադրում, ավտոկանգառների ժամանակակից տաղավարների կառուցում,
5.Համայնքի կանաչ գոտիների և հանգստի պուրակների վերականգնում
6.Համայնքի բնակչության սոցիալ–տնտեսական պայմանների բարելավում՝ նրանց մատուցվող հանրային ծառայությունների տեսակների (ջրամատակարարում և ջրահեռացում, գազամատակա-ռարում, էլեկտրամատակարարում, աղբահանություն և սանիտարական մաքրում, տրանսպորտ և կապ, նախադպրոցական և դպրոցական կրթություն, արտադպրոցական դաստիարակություն, մշակույթ, առողջապահություն և սպորտ, սոցիալական պաշտպանություն և այլն) շրջանակի աստիճանական ընդլայնման, հասանելիության ու մատչելիության ապահովման և որակի անշեղ բարձրացման միջոցով,
7.Համայնքի աշխատակազմի, համայնքային կազմակերպությունների ինստիտուցիոնալ կարողությունների աստիճանական հզորացում, տեղական ժողովրդավարության ամրապնդում, համայնքում պատշաճ կառավարման սկզբունքների հետևողական իրականացում,
8.Համայնքապետարանի գործունեության թափանցիկության, հրապարակայնության և հաշվետվողականության մակարդակների հետևողական բարձրացում,
9. Համայնքի ֆինանսական կառավարման համակարգում հստակ մեխանիզմների ներդրում և հետևողական կիրառում,

10.Նպաստել նոր աշխատատեղերի ստեղծմանը և համայնքից արտագաղթի նվազեցմանը, բնակչության թվաքանակի կայունացմանը:

Համայնքի զարգացման 2017-2021թթ. հնգամյա ծրագրի հիմնական նպատակներն են՝

1.Տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության ակտիվացում՝ մասնակցության նոր մեթոդների և ձևերի ներդրման և աստիճանական զարգացման միջոցով,
2.Համայնքում գյուղատնտեսության (հողագործության, անասնապահության, թռչնապահության, մեղվապահության) զարգացում՝ տնամերձերի, վարելահողերի, խոտհարքների և արոտավայրերի նպատակային և արդյունավետ օգտագործման միջոցով,
3.Ներհամայնքային ճանապարհների և փողոցների վիճակի բարելավում և լուսավորում,
4.Համայնքի նախադպրոցական կրթության և արտադպրոցական դաստիարակության ոլորտներում պայմանների ընդլայնում և բարելավում,
5.Համայնքի դպրոցական հանրակրթության պայմանների բարելավում՝ դպրոցների շենքերի նորոգման, ներքին հարդարման ուղղություններով
6.Բնաչության, և հատկապես երիտասարդության և երեխաների համար ազատ ժամանցի և ակտիվ հանգստի կազմակերպման նպատակով նպաստավոր պայմանների ստեղծում:
7.Համայնքի բնակչության կենցաղային պայմանների բարելավում՝ առանձնատների գազաֆիկա-ցման, խմելու և տեխնիկական ջրի ջրամատակարարման արտաքին և ներբնակավայրային համակարգերի նորոգման և շահագործման, աղբահանության և սանիտարական ծառայությունների կազմակերպման և մատուցման ճանապարհով,
8.Համայնքի բնակչությանը հանրային ծառայություններ մատուցող համայնքային հիմնական ենթակառուցվածքների շենքերի հիմնանորոգում կամ վերակառուցում,
9.Չորրորդ կարգի վթարային շենքերի բնակիչներին բնակության համար անվտանգ և հարմարավետ կեցության պայամանների ստեղծում:
10.Ջրահեռացման համակարգի և սելավատարների կառուցապատմամբ բնակչությանը զերծ պահել հակասանիտարական իրավիճակներից, ապահովել շրջակա միջավայրի պահպանությունը: 11.Համայնքում գործարար միջավայրի բարելավում՝ նոր աշխատատեղեր ստեղծող անհատներին և կազմակերպություններին խրախուսելու, նրանց խնդիրներին օպերատիվ լուծում տալու միջոցով:
12.Բազմաբնույթ սոցիալական ծրագրերի միջոցով նպաստել սոցիալապես անապահով վիճակում գտնվող մարդկանց կյանքի պայամանների որոշակի բարելավմանը:

1.ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՎԱՐՏՈՒՄ ԵՎ ՇԱՀԱԳՈՐԾՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Նախադպրոցական դաստիարակություն
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	1988 թ երկրաշարժից համայնքի մանկապարտեզի շենքը վթարվել է և դարձել շահագործման համար ոչ պիտանի: Այդ ժամանակվանից մանկապարտեզը տեղավորված է վարչական շենքի փոքր, անհարմարավետ, խոնավ և նորմաններին չհամապատասխանող 230 քմ տարածքներում, որում չկան բավարար պայմաններ և հնարավորություն ներ նախակրթության չափանիշներին համապատասխան գործունեության ծավալման համար: 2016 թ սեպտեմբերից տարածքային զարգացման հիմնադրամի կողմից և համայնքի 4 % համաֆինանսավորմամբ սկսվել է մանկապարտեզի համար հատկացված շենքի վերակառուցումը, որը պետք է շահագործման հանձնվի 2017 թ սեպտեմբերին:
Ծրագրի խնդիրները	Համայնքում ստեղծել հարմարավետ պայմաններով և պետության կողմից սահմանված չափանիշներին համապատասխան նախադպրոցական դաստիարա կության կազմակերպման համար տիպային շենք
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Համայնքի 120 երեխաների նախադպրոցական դաստիարակության համար ստեղծել տիպային մանկապարտեզի շենք 2. Բարձրացնել մանկապարտեզ հաճախող երեխաների կրթության և դաստիա-րակության որակը և այն համապատասխանեցնել պահանջված մակարդակի: 3.Աշխատակիցների համար ստեղծել լիարժեք պայմաններ՝ ապահովելու երեխաների կրթության և դաստիարակության արդյունավետություն և որակ:
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	ՀՀ կառավարության կողմից համայնքին հանձնված դպրոցի մասնաշենքի վերակառուցում մանկապարտեզի՝ հաստատված նախագծա-նախահաշվային փաստաթղթերին համապատասխան
Ծրագրի բյուջեն	150,0 միլիոն ՀՀ դրամ, որից ՏՋՀ կողմից՝ 142,8 մլն.դրամ
Ծրագրի իրականա ցման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Դոնորական կազմակերպությունների և համայնքի միջոցներով ապահովել նորակառույց մանկապարտեզի գույքավորումը
Միջոցառման հիմնական ռիսկերը	Դոնորական կազմակերպությունների առկայությունը Համայնքի ֆոնդային բյուջեում անհրաժեշտ մուտքերի ապահովում
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի 3- 6 տարեկան 120 երեխաներ
Միջոցառման սկիզբ	2016 թ սեպտեմբեր
Միջոցառման ավարտ	2017 թ սեպտեմբեր

2. ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶԻ ՇԵՆՔԻՆ ԿԻՑ ԿԱՌՈՒՅՑԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄ

Ոլորտային ծրագիր	Նախադպրոցական դաստիարակություն
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	1988 թ երկրաշարժից համայնքի մանկապարտեզի շենքը վթարվել է և դարձել շահագործման համար ոչ պիտանի: Անցած տարիների ընթացքում մանկապարտեզը տեղավորված է վարչական շենքի փոքր, անհարմարավետ, խոնավ և նորմաններին չհամապատասխանող 220 քմ տարածքում, որում չկան բավարար պայմաններ և հնարավորություններ նախակրթության չափանիշներին համապատասխան գործունեության ծավալման համար: Այլ հնարավորություն չունենալու պատճառով մանկապարտեզի շենքին կից լրացուցիչ կառույցի իրականացումը էականորեն կնպաստի մանկապարտեզի գործունեության բարելավմանը
Ծրագրի խնդիրները	Թիվ 2 մանկապարտեզի համար ստեղծել համեմատաբար հարմարավետ պայմաններ՝ պահանջված չափանիշներին համապատասխան նախադպրոցական դաստիարակության կազմակերպման համար
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Համայնքի 100 երեխաների նախադպրոցական դաստիարակության համար ստեղծել համեմատաբար հարմարավետ շենքային պայմաններ: 2. Բարձրացնել մանկապարտեզ հաճախող երեխաների կրթության և դաստիարակության որակը: 3.Աշխատակիցների համար ստեղծել համեմատաբար տանելի պայմաններ՝ ապահովելու երեխաների կրթության և դաստիարակության արդյունավետություն և որակ:
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.,,Վարդանանց ասպետներ,, կազմակերպության հետ ձեռք բերված նախնական պայմանավորվածության վավերացում համաձայնագրի տեսքով: 2.Անհրաժեշտ նախագծային-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում 3.Ապահովել աշխատանքների գնման մրցույթի անցկացումը և շինարարական կազմակերպության հետ համապատասխան պայմանագրի կնքում:
Ծրագրի բյուջեն	20,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Թիվ 1 մանկապարտեզի շենքային պայմանների բարելավման նպատակով այսօր ՏՋՀ կողմից համայնքում իրականացվում է ծրագիր: Թիվ 2 մանկապարտեզի հարցի լուծման նպատակով հսկայական ծախսեր պահանջող նոր ծրագրի իրականացումը կոռեկտ չի լինի: Հետևաբար, մանկապարտեզի պայմանները որոշակիորեն բարելավելու համար կպահանջվի ընդամենը 20,0 մլն. դրամ, որը պետության կողմից արդեն խնդիր չէ:
Միջոցառման հիմնական ռիսկերը	Դոնորական կազմակերպության կողմից նախնական պայմանավորվածության չխախտումը
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի 3-6 տարեկան 100 երեխաներ
Միջոցառման սկիզբ	2018 թ
Միջոցառման ավարտ	2018 թ

3. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Բնակարանային շինարարության խթանում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	1988 թ երկրաշարժի հետևանքով Բաղրամյան 43 և Նժդեհի 7 հասցեներում գտնվող բազմաբնակարան բնակելի շենքերը դարձել են 4-րդ աստիճանի վթարային: Շենքերի վիճակն ահավոր է և բնակության համար խիստ վտանգավոր և անթույլատրելի: Շենքերը փլուզվում են՝ պատերի քարերը սկսել են թափվել, միջհարկային ծածկերն ու պատերն օրեցոր իրարից հեռանում են, հիմքերը նստում են: Ծանրաքարշ ավտոմեքենաների շարժից շենքերը ցնցվում են, որի ընթացքում երեխաները տներից դուրս են փախչում, մարդիկ գիշերներն անցկացնում են սարսափի մեջ: Այդ ամենը հաշվի առնելով պետբյուջեի միջոցներով 2016 թ նոյեմբերին սկսվել է նոր շենքի կառուցման շինարարությունը
Ծրագրի խնդիրները	Վթարային շենքերի և առանձնատների բնակիչների համար ստեղծել անվտանգ կեցության պայմաններ
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Չորրորդ կարգի վթային շենքերում բնակվող 38, առանձանատներում՝ 6 ընտանիքների ապահովել հարմարավետ բնակարաններով
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	Հաստատված նախագծային-նախահաշվային փաստաթղթերին համապատասխան
Ծրագրի բյուջեն	765,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրս	Շենքի կառուցումն ավարտել ամենասեղմ ժամկետում՝ մինչև 2019 թ
Միջոցառման հիմնական ռիսկեր	Շենքի կառուցման ձգձգումը հղի է հնարավոր վտանգներով
Միջոցառման հիմնական շահառուները	Վթարային շենքերի և առանձնատների 44 ընտանիքներ՝ շուրջ 250 բնակիչ
Միջոցառման սկիզբ	2016 թ նոյեմբեր
Միջոցառման ավարտ	2019 թ հոկտեմբեր

4. ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ՋՐԱՐԲԻԱՑՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Գյուղատնտեսության զարգացմանը խթանում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Նախորդ տարիների համեմատությամբ մշտապես տեղի է ունենում անասնագլխաքանակների զգալի նվազեցում, որի հիմնական պատճառն անասնապահության ցածր մթերատվությունն է և ոչ բավարար եկամուտների ստացումը: Անասնապահության անարդյունավետությունը հիմնականում պայմանավորված է արոտավայրերում անասունների ջրման հնարավորության բացակայությամբ, Անասուններին ջրելու համար քայլեցնում են 4-5 կմ, որը խիստ ազդում է մթերատվության վրա: 2016 թ գյուղատնտեսության ԾԻԳ կողմից և համայնքի համաֆինանսավորմամբ արոտավայրերում իրականացվել է ջրարբիացման ծրագրի 1-ին փուլը, որի շարունակությունը պետք է իրականացվի 2017 թ, որպեսզի արոտավայրերն ամբողջությամբ ջրարբիացվեն:
Ծրագրի խնդիրները	Նպաստել, որպեսզի հնարավորություններ ունեցող բնակիչները զբաղվեն անասնապահությամբ՝ դրանով ընտանիքին ապահովելու լրացուցիչ մթերքներով և եկամուտներով, նվազեցնելու սոցիալական լարվածությունը
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Անասնապահության մթերատվության և եկամտաբերության ավելացում 25-30% չափով 2.Գլխաքանակի ավելացում՝ 10-20 % չափով 3. Անասնապահությամբ զբաղվող ընտանիքներն ապահովված կլինեն անհրաժեշտ մթերքներով, ավելցուկը կվաճառվի:
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.2,5 կմ ջրագծի կառուցում՝ d= 50 մմ պլաստմասե խողովակով 2. 3 տեղերում ջրման խմոցների տեղադրում 3.Դաշտամիջյան ճանապարհների բարեկարգում
Ծրագրի բյուջեն	80,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի 1-ին փուլն ավարտվել է, 2-րդ փուլը հանդիսանում է 1-ին փուլի անմիջական շարունակությունը
Միջոցառման հիմնական ռիսկերը	Գյուղատնտեսության ԾԻԳ ֆինանսավորում
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքում անասնապահությամբ զբաղվող 400 ընտանիքներ
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2017 թ

5. ՓՈՂՈՑՆԵՐՈՒՄ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՑՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Ճանապարհային ենթակառույցների պահպանում և շահագործում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքի 32 կմ փողոցներից արտաքին լուսավորություն ունեն 10 կմ-ը, 22 կմ-ը՝ չունեն: Գիշերային ժամերին փողոցներով անցնելը վտանգավոր է և անհարմար թե հետիոտների և թե տրանսպորտային միջոցների համար: Եղել են դեպքեր, երբ մարդիկ գիշերով անցնելով չլուսավորված փողոցով ընկել են և ստացել վնասվածքներ, ընկել մեքենայի տակ և այլն: Չլուսավորված փողոցը վտանգում է նաև ավտոմեքենաների անվտանգ շարժը, մարդկաց պատճառելով չպլանավորված ծախսերի կատարում: Առավել հրատապ են լուսավության անցկացումը ավելի բանուկ և մարդաշատ փողոցներում:
Ծրագրի խնդիրները	Համայնքի փողոցներով բնակիչների և ավտոմեքենաների անվտանգ և ապահով տեղաշարժի համար բարենպաստ պանմանների ստեղծում
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Ունենալ լուսավոր համայնք 2.Ապահովել բնակչության անվտանգ և ապահով տեղաշարժը, ավտոմեքենաների տերերին զերծ պահել լրացուցիչ և չպլանավորված ծախսերից:
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.Պատվիրել 10 կմ երկարությամբ և 250 կետով գիշերային լուսավորության համակարգի կառուցման նախագծային-նախահաշվային փաստաթղթեր 2.Անցկացնել աշխատանքների գնման մրցույթ, հաղթողի հետ կնքել պայմանագիր և իրականացնել պահանջվող աշխատանքները
Ծրագրի բյուջեն	17,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի ֆոնդային բյուջեի մուտքերի ավելացում
Միջոցառման հիմնական ռիսկերը	Դոնորական կազմակերպության առկայություն
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2021 թ

6. ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ՇԵՆՔԵՐԻ ՏԱՆԻՔՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

(Ծրագրի անվանո

Ոլորտային ծրագիր	Բնակչության սոցիալական պաշտպանություն
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքի 6 բազմաբնակարան շենքեր կառուցվել են 30-50 տարի առաջ և նրանց տանիքները երբեք չեն նորոգվել: Ներկայումս դրանք գտնվում են վթարա-յին վիճակում, որի հետևանքով անձրևաջրերը անարգել լցվում են վերջին հարկի բնակարանները, շենքերի արտաքին պատերը վնասվում են՝ դրանցով ավելի խորացնելով շենքերի վթարայնությունը: Այդ շենքերն են՝ Բաղրամյան 8, 23,46,49,Նժդեհի 10,Գայի 7,որոնց ընդհանուր մակերեսը կազմում է 4500 քմ:
Ծրագրի խնդիրները	Բազմաբնակարան 6 շենքերի բնակիչների համար ստեղծել կեցության անվտանգ պայմաններ
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Կանխել բազմաբնակարան շենքերի վթարայնության խորացումը 2.Բազմաբնակարան 6 շենքերի 120 ընտանիքների՝ 540 բնակչությամբ, համար ստեղծել անվտանգ և ապահով բնակարանային պայմաններ
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.4500 քմ տանիքների նորոգման համար նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում 2.Աշխատանքների գնման մրցույթի անցկացում, հաղթողի հետ պայմանագրի կնքում և աշխատանքների իրականացում
Ծրագրի բյուջեն	50,4 միլիոն դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի 18 բնակելի շենքերի տանիքների նորոգումը կատարվել է ՀՀ Նախագահի կողմից հատկացված հրատապ ծրագրերով: Այսօր արդեն մնացած 6 շենքերի բնակիչները շահարկում են այդ փաստը, որը չպետք է թույլ տալ, որ ծավալվի: ՈՒստի պետք է շարունակվեն հրատապ ծրագրերի հատկացումները:
Միջոցառման հիմնական ռիսկերը	Շենքերի տանիքների նորոգումն ընդգրկված է եղել ՀՀ նախագահի կողմից հատկացվող ամենամյա հրատապ ծրագրերի ցանկում, սակայն 2016 թ մարզին միջոցներ չի հատկացվել:
Միջոցառման հիմնական շահառուները	Բազմաբնակարան 6 շենքերի 120 ընտանիքներ՝ 540 բնակչությամբ
Միջոցառման սկիզբ	2018 թ
Միջոցառման ավարտ	2020 թ

7. ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԻ ՓՈՍԱՅԻՆ ՆՈՐՈԳՈՒՄՆԵՐ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Ճանապարհների պահպանություն և շահագործում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքի 32 կմ երկարությամբ փողոցներից և ճանապարհներից ասֆալտապատված են 6 կմ, որոնք կառուցվել են 30-50 տարի առաջ և ներկայումս գտնվում են քարուքանդ վիճակում: Համայնքի սուղ միջոցներով ամեն տարի դրանցից ամենակարևոր նշանակություն ունեցող նույն ճանապարհները ենթարկվում են փոսային նորոգումների:
Ծրագրի խնդիրները	Համայնքի փողոցների բարեկարգում և բավարար տեսքի բերում
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	Դեպի հիվանդանոց, գերեզմանատներ, դպրոցներ և եկեղեցի տանող ճանապարհների համեմատաբար անվտանգ երթևեկության ապահովում:
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.Ամեն տարի 1000 քմ փոսային նորոգման աշխատանքների գնման գործընթացի կազմակերպում, հաղթող շինարարի հետ պայմանագրի կնքում
Ծրագրի բյուջեն	30,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Անհրաժեշտ աջակցության դեպքում նորոգման ծավալների ավելացում
Միջոցառման հիմնական ռիսկերը	Համայնքի ֆոնդային բյուջեի ապահովում
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2021 թ

8. ՆԵՐՔԱՂԱՔԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Ճանապարհների պահպանություն և շահագործում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքի 32 կմ երկարությամբ փողոցներից և ճանապարհներից ասֆալտապատված են 6 կմ, որոնք կառուցվել են 10-50 տարի առաջ և ներկայումս գտնվում են քարուքանդ վիճակում: Համայնքի 26 կմ ճանապարհները գրունտային են, ամեն տարի ենթարկվում են նորոգման, սակայն ձեռնարկված միջոցառումները և կատարած ծախսերը անարդյունավետ են: Դժվար անցանելության պատճառով բնակչության և ավտոմեքենաների տեղաշարժը հատկապես անձրևային պայմաններում դառնում է անհնարին: Ասֆալտապատման թանկությունը համայնքին հնարավորություն չի տալիս իր ունեցած սուղ միջոցներով ապահովել ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատումը, ուստի ակնկալում է պետության աջակցությունը:
Ծրագրի խնդիրները	Համայնքի ճանապարհները բերել բարեկարգ տեսքի, աստիճանաբար գրունտային ճանապարհները փոխարինել ասֆալտապատ ճանապարհներով
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Ներհամայնքային ճանապարհների ասֆալտապատման միջոցով համայնքը բերել բարեկարգ տեսքի, այն համապատասխանեցնել քաղաքային միջավայրի 2.Ապահովել բնակիչների և ավտոմեքենաների անվտանգ երթևեկությունը 3.Ամեն տարի գրունտային նույն ճանապարհների բարեկարգման նպատակով ծախսված միջոցների խնայողության հաշվին լուծել այլ հրատապ խնդիրներ
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	2018-2021 թթ յուրաքանչյուր տարի պետբյուջեի միջոցներով ասֆալտապատել ներհամայնքային 1,5 կմ ճանապարհ
Ծրագրի բյուջեն	240,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	ՀՀ կառավարության կողմից համայնքային կարևորագույն խնդրի լուծման համար իրատեսական և նպատակային վերաբերմունքի դրսևորում:
Միջոցառման հիմնական ռիսկերը	Ծրագրի չիրականացումը կարող է հակառակ էֆեկտ ունենալ համայնքների խոշորացման պարագայում համայնքի կենտրոնի բավարար տեսքի ապահովման հարցում
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ, այդ ճանապարհներով երթևեկող հարևան 8 համայնքների բնակիչներ
Միջոցառման սկիզբ	2018 թ
Միջոցառման ավարտ	2021 թ

9. ԳՐՈՒՆՏԱՅԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԽՃԱԼՑՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Ճանապարհների պահպանություն և շահագործում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքի 32 կմ երկարությամբ փողոցներից և ճանապարհներից 26 կմ-ը գրունտային են, որոնք գրեթե ամեն տարի ենթարկվում են նորոգման, սակայն ձեռնարկված միջոցառումները և կատարած ծախսերը անարդյունավետ են: Դժվար անցանելության պատճառով բնակչության և ավտոմեքենաների տեղաշարժը հատկապես անձրևային պայմաններում դառնում է անհնարին: Ստիպված, այդ ճանապարհները մշտապես պետք է բարեկարգվեն, որպեսզի ապահովվի տեղաշարժը:
Ծրագրի խնդիրները	Համայնքի ճանապարհները բերել բարեկարգ տեսքի
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Համայնքի ճանապարհները բերել համեմատաբար բավարար տեսքի 2.Ապահովել բնակիչների և ավտոմեքենաների անվտանգ երթևեկությունը
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.Կազմել անհրաժեշտ նախահաշվային փաստաթղթեր՝ 2017-20121 թթ ամեն տարի նույն ծավալի բարեկարգումներ կատարելու համար 2.Աշխատանքները կազմակերպել կոմունալ ծառայության ուժերով
Ծրագրի բյուջեն	5,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Պետբյուջեի կողմից անհրաժեշտ հատկացումների դեպքում ավելի նպատակահարմար է ճանապարհների բարեկարգումը կատարել ավելի ռացիոնալ եղանակներով ու մասնագիտացված
Միջոցառման հիմնական ռիսկերը	Համայնքի ֆոնդային բյուջեի ապահովում
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2021 թ

10. ՔԱՂԱՔԱՅԻՆ ԶԲՈՍԱՅԳՈՒ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Բնակավայրի կառուցապատում, բարեկարգում և կանաչապատում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքի զբոսայգին գտնվում է անբարեկարգ վիճակում և երկար տարիներ չի օգտագործվում: Համայնքի բնակչությունը, երիտասարդությունը և երեխաները չունեն ազատ ժամանցի և հանգստի կազմակերպման վայր: Տուրիզի զարգացման համար նպաստավոր պայմաններ և հետանկար ունեցող համայնքում չկան հանգստի և ազատ ժամանցի անցկացման վայրեր:
Ծրագրի խնդիրները	1.Համայնքի բնակչության, երիտասարդության և երեխաների հանգստի արդյունավետ կազմակերպում 2.Համայնքում զբոսաշրջության զարգացմանը նպաստում և խթանում
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Բնակչության ազատ ժամանցի և հանգստի կազմակերպման համար ստեղծել իրենց հանգիստը և ազատ ժամանակը արդյունավետ և նպատակային անցկացնելու բավարար պայմաններ: 2.Ամառվա ամիսներին համայնքում իրենց հանգիստն անցկացնող հարյուրավոր հովվեկների համար , ովքեր նույնպես դրանում խնդիր ունեն, ստեղծել հանգստի անցկացման պայմաններ: 3.Խնդրի լուծումը կնպաստի և կխթանի համայնքում զբոսաշրջության զարգացմանը
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.Նախագծային-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում 2.Պարսպապատում 3.Անցուղիների և ծառուղիների կառուցում 4.Ջրահեռացման բաքերի վերանորոգում-կարգավորում 5.Լուսավորության համակարգի ստեղծում 6.Կարուսելների տեղադրում 7.Գործարարների միջոցով սրճարանի կառուցում 8.Լրացուցիչ ծառապատում, ծառերի էտում և սանիտարական տեսքի բերում
Ծրագրի բյուջեն	20,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Առաջարկություններ տարբեր դոնորական կազմակերպությունների
Ծրագրի հիմնական ռիսկը	Նպատակային ֆինանսավորման բացակայությունը կամ ձգձգումը Համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների ապահովում
Միջոցառման հիմնական շահառուները	Ամբողջ համայնքը: Ամռանը իրենց հանգիստը Ապարանում անցկացնող հարյուրավոր հովվեկներ
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2018 թ

11. ԳԵՐԵԶՄԱՆԱՏՆԵՐԻ ՊԱՐՍՊԱՊԱՏՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Համայնքային գերեզմանատների պահպանում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքի 4 գերեզմանատները գտնվում են համայնքի տարածքի ներսում՝ թաղամասերի հարևանությամբ, կամ դրանց հարակից են: Այդ հանգամանքը շատ հաճախ խանգարում է մարդկանց, և հատկապես երեխաներին, անցնելու դրանց մոտով, եղել են բազմաթիվ անցանկալի դեպքեր: Պարիսպ չունենալու պատճառով անասունները լցվում են գերեզմանատները և վնասում շիրմաքարերը, որն առաջացնում է բնակչության դժգոհությունը
Ծրագրի խնդիրները	Գերեզմանատների պարսպով տարանջատումը համայնքի բանուկ թաղամասերից, գերեզմանատների պահպանության ապահովում
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Կապահովվի բնակչության և հատկապես երեխաների անվտանգությունը, 2.Կապահովվի սրբություն հանդիսացող տարածքների անձեռմխելիությունը:
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.Պատվիրել նախագծա – նախահաշվային փաստաթղթեր, որում ներառել՝ 1500 գծմ երկարությամբ և 1,5 մետր բարձրությամբ տուֆ քարից պարսպի կառուցում
Ծրագրի բյուջեն	20,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ապարան զարգացման հիմնադրամում անհրաժեշտ միջոցների ապահովում
Միջոցառման հիմնական ռիսկերը	Համայնքի ֆոնդային բյուջեի մուտքերի ապահովում Դոնորական կազմակերպությունների առկայություն
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2019 թ

12. ՈՌՈԳՄԱՆ ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Գյուղատնտեսության զարգացմանը խթանում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքում առկա 424 հա տնամերձ հողամասերից մշակվում է 50%-ը: Ցածր է հողամասերի մշակման արդյունավետությունը Հողամասերից չի ապահովվում բավարար եկամուտներ Ոռոգումը երբեմն կատարվում է խմելու ջրով, որը խոչընդոտում է խմելու ջրի բավարար սպասարկմանը, իսկ այդպիսիններն էլ ենթարկվում են ֆինանսական տույժերի, որն էլ ազդում է ընտանիքի սոցիալական վիճակի վրա:
Ծրագրի խնդիրները	Տնամերձ հողամասերի ամբողջական մշակում, մշակման արդյունավետության բարձրացում և կայուն եկամուտների ապահովում
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1. 424 հա տնամերձ հողամասերը կմշակվեն ամբողջությամբ և լիարժեքորեն 2. Կրկնակի չափով կավելանան տնամերձ հողամասերից ստացվող գյուղատնտեսական մթերքների արտադրության ծավալները 3.Լրացուցիչ ստացվող մթերքների վաճառքից կավելանան ընտանիքների եկամուտները և որոշակիորեն կբարելավի նրանց սոցիալական վիճակը: 4. Կբացառվի խմելու ջրով ոռոգում կատարելը, որի շնորհիվ կբարելավվի նաև խմելու ջրի սպասարկման վիճակը:
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	Համայնքի հյուսիսային և արևմտյան երկու ուղղություններով անցնում են Հալավարի ջրամբարից սնուցվող մայր ջրատարներ. 1. D= 100-150 մմ տրամաչափի մետաղական և /կամ/պլաստմասե խողովակներով 6000-8000 մետր երկարությամբ ջրագծի կառուցում 8 ուղղութուններով 2. Ջրագծերի փակ հատվածներում մետաղական հանգստացուցչների տեղադրում, ընդամենը 20 հատ՝ 1,5x1,5x1 մետր չափերի 3.Մակերեսով անցնող ջրագծերի վրա, փողոցների հատման խաչմերուկներին փականների տեղադրում, 40 հատ 4.Թաղամասերի բնակիչների ուժերով և միջոցներով թաղամասերում 6 կմ d= 75-100 մմ պլաստմասե խողովակներով ջրագծերի անցկացում, որպեսզի ջուրը խողովակով հասցվի հողամաս: 5. Նախագծային – նախահաշվային փաստաթղթերի կազմում
Ծրագրի բյուջեն	ԸՆԴԱՄԵՆԸ՝ 80,0 միլիոն ՀՀ դրամ, Ջրային տնտեսության պետական կոմիտեի ծրագրով՝ 80,0 միլիոն,
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	ՀՀ կառավարության աջակցությունը
Միջոցառման հիմնական ռիսկերը	Նպատակային ֆինանսավորման բացակայությունը կամ ձգձգումը
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի 1200 ընտանիքներ, 5000 բնակիչներ
Միջոցառման սկիզբ	2019 թ
Միջոցառման ավարտ	2020 թ

13. ՍԵԼԱՎԱՏԱՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Բնակավայրի կառուցապատում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքի ամենամեծ սելավատարը կառուցապատված չի, ամեն տարի նրա մաքրման համար ծախսվում են բավականին միջոցներ, որոնք որոշ ժամանակ անց դառնում են անարդյունավետ: Գարնանային հեղեղումների ընթացքում սելավատարը դառնում է անտարողունակ և ջրերը լցվում են բնակիչների առանձնատները, ողողում տնամերձ հողամասերը և մարդկանց պատճառում հսկայական ֆինանսական վնասներ:
Ծրագրի խնդիրները	Ապահովել սելավատարի անվտանգ հոսքը
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Առանձնատներն ու հողամասերը զերծ պահել սելավների ողողումներից 2.Նպաստել, որպեսզի բնակիչները չկատարեն ավելորդ և չնախատեսված ծախսեր 3.Ապահովել բնակիչների անվտանգությունը
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.Կրկին դիմել ջրային տնտեսության պետական կոմիտեին՝ վերանայելու և ընթացք տալու նախկինում բարձրացված խնդիրը 2.1200 գծմ երկարությամբ, 4-5 մետր լայնությամբ և 1,5 մետր խորությամբ Սելավատարի պատերի և հատակների բետոնապատում, ազատ հոսքի համար Անհրաժեշտ թեքության ապահովում, բերվածքների կուտակման հորերի կառուցում
Ծրագրի բյուջեն	75,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Սթափ վերաբերմունք տարիներ շարունակ բարձրացված հարցի լուծման նկատմամբ, սելավների վնասների համար տրվող փոխհատուցումների բացառում
Միջոցառման հիմնական ռիսկերը	ՀՀ Պետբյուջեից անհրաժեշտ միջոցների հատկացում, ծրագրի իրականացում
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ
Միջոցառման սկիզբ	2018 թ
Միջոցառման ավարտ	2018 թ

14. ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Կոմունալ տնտեսության աշխատանքների ապահովում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքի թաղամասերի զգալի մասում ջրահեռացման համակարգերը կառուցվել են 40-60 տարի առաջ, իսկ մի մասում էլ՝ ընդհանրապես չկան: Նրանց մի մասը մի կերպ շահագործվում է, իսկ մյուսներն ամբողջությամբ դուրս են եկել շարքից, որի հետևանքով կեղտաջրերի հեռացումը կատարվում է բացօթյա առուների միջոցով և որը պատճառ է հանդիսանում հակասանիտարական իրավիճակների հաճախակի ստեղծման: Համակարգը 1998 թ-ից հանձնվել է Հայջրմուղկոյուղի ՓԲԸ կառավարմանը, Սակայն անցած 18 տարիների ընթացքում ջրահեռացման համակարգի կառուցման ուղղությամբ որևէ ծրագիր չի իրականացվել
Ծրագրի խնդիրները	Համայնքում կառուցել ջրահեռացման բավարար համակարգ
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Համայնքում ստեղծել կեղտաջրերի հեռացման այնպիսի համակարգ, որը կբացառի համաճարակային վարակների բռնկումներ, կստեղծվի կայուն սանիտարական իրավիճակ: 2.Առանձնատներում կստեղծվեն սանհանգույցներ, որը կապահովի նորմալ կենցաղավարություն
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	Խմելու ջրի և ջրահեռացման սպասարկման կառավարումը ստանձնած նոր օպերատորին՝ ,,ՎԵՈԼԱ'' ընկերության միջոցով, սկսած 2018 թ, ամեն տարի կառուցել առնվազն 2 կմ ջրահեռացման համակարգ
Ծրագրի բյուջեն	80,0 միլին ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրս	Օպերատորի առջև խնդիր կդրվի ավելի մեծ ծավալի ծրագրի իրականացում, որպեսզի համայնքի զգալի մասում առկա խնդիրը հրատապ լուծում ստանա
Միջոցառման հիմնական ռիսկերը	Ծրագրի իրականացման համար քանդվող փողոցների ասֆալտապատում և /կամ/ բարեկարգում
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակչություն
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2021 թ

15. ԹԻՎ 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆԸ ԽԹԱՆՈՒՄ
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Դպրոցի շենքը 1988 թ երկրաշարժի հետևանքով դարձել է վթարային և կարիք ունի հրատապ վերանորոգման: Դպրոցը 2012 թ ենթարկվել է մասնակի նորոգման՝ կառուցվել է նոր տանիք, նորացվել են պատուհանները: Այսօր այն խիստ կարիք ունի պատերի ամրացման, ներքին հարդարման և կոսմետիկ վերանորոգման, հատակները քանդված են, դռները կոտրված: Նման պայմաններում անգամ, ջեռուցման համակարգի առկայության պարագայում, անհնար է ձմռանը ապահովել բավարար տաքություն: Շենքի ներքին անբարեկարգ և անհրապույր վիճակի պատճառով երեխաները խուսափում են այդ դպրոցը հաճախելուց և շատերը հեռացել են:
Ծրագրի խնդիրները	Երեխաների կրթության և դաստիարակության արդյունավետ և նպատակային կազմակերպման և իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Դպրոցում սովորող 221 երեխաների կրթության և դաստիարակության համար կստեղծվեն նորոգված, բարետես և հարմարավետ պայմաններ, որտեղ երեխաները կհաճախեն սիրով, կկանխվի դպրոցից արտահոսքը 2.Դպրոցում աշխատող 30 մանկավարժների համար կստեղծվի երեխաների կրթությամբ և դաստիարակությամբ արդյունավետորեն զբաղվելու նպաստավոր պայմաններ, կբարձրանա ուսման որակը:
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	Պատվիրել նախագծային-նախահաշվային փաստաթղթեր, որում պետք է հիմնականում ընդգրկվելու են հետևյալ աշխատանքները՝ 1.Պատերի ամրացում 2.Հատակների կառուցում 3.Դռների տեղադրում 4.Ներքին հարդարման և կոսմետիկ վերանորոգման աշխատանքներ
Ծրագրի բյուջեն	60,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Արագածոտնի մարզպետի և ՀՀ ԿԳ նախարարի անհանգստությունը՝ դպրոցը նման վիճակից շուտափույթ դուրս բերելու գործում
Միջոցառման հիմնական ռիսկերը	Ծրագրի ձգձգումը կարող է նպաստել դպրոցից երեխաների արտահոսքին
Միջոցառման հիմնական շահառուները	Դպրոց հաճախող 221 երեխաներ, 30 աշխատողներ
Միջոցառման սկիզբ	2018 թ
Միջոցառման ավարտ	2018 թ

16. ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Արտադպրոցական դաստիարակություն
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Դպրոցում գործում են երաժշտական և կերպարվեստի բաժիններ՝ դաշնամուրի, ջութակի, կիթառի, քանոնի, դուդուկի, դհոլի, գեղանկարչության, գոբելենի, փայտի մշակման և խեցեգործության դասարաններով: Դպրոցում սովորում են 180 երեխաներ, աշխատում են 21 մանկավարժներ, 3 տեխնիկական աշխատողներ Դպրոցում կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ՝ համայնքի և դոնորական կազմակերպությունների միջոցներով: Վատ վիճակում են գտնվում սան.հանգույցները և շենքի տանիքը,1-ին հարկի դասասենյակները, գտնվելով անմիջապես փողոցի բանուկ հատվածում, շենքը ցանկապատված չէ
Ծրագրի խնդիրները	Երեխաների գեղագիտական կրթության արդյունավետ և նպատակային կազ-մակերպման և իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Դպրոցում սովորող 180 երեխաների և 24 աշխատողների համար կստեղծվեն սովորելու և աշխատելու բավարար պայմաններ: 2.Դպրոցում կստեղծվի բավարար սանիտարա-հիգիենիկ պայմաններ 3. Կապահովվի երեխաների անվտանգությունը 4. Կավելանան խմբերի և ընդգրկվող երեխաների քանակը
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	Նախագծա-նախահաշվային փաստաթղթերի պատվիրում, որում պետք է հիմնականում ընդգրվեն հետևյալ աշխատանքները՝ 1.Վերանորոգել՝ 2 սանհանգույցները, 700 քմ տանիքը, 5 դասասենյակները՝ 120 քմ ընդհանուր մակերեսով, 2.Կառուցել 100 գծմ ցանկապատ
Ծրագրի բյուջեն	18,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Համայնքի բյուջեի կապիտալ ֆոնդում անհրաժեշտ միջոցների ապահովում
Միջոցառման հիմնական ռիսկերը	Դոնորական կազմակերպության առկայություն
Միջոցառման հիմնական շահառուները	Դպրոց հաճախող 180 երեխաներ, 23 աշխատողներ
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2018 թ

՝

17. ՄԱՐԶԱԴԱՇՏԻ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Ֆիզիկական կուլտուրայի և առողջ ապրելակերպի խրախուսում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքի ֆուտբոլի մարզադաշտը կառուցվել է 1960-ական թվականներին և մինչ օրս վերանորոգման չի ենթարկվել: Չկան հանդերձարաններ, սանհանգույցներ, նստատեղեր: Ֆուտբոլը համայնքում ընդունված և սիրված մարզաձև է, նրանով զբաղվում են երիտասարդության և երեխաների մեծ մասը: Համայնքի մանկական հավաքականը մշտապես մասնակցում է հանրապետական առաջնություններին, որը պահանջում է նաև նորմատիվային պահանջներին համապատասխան մարզադաշտի առկայություն: Նման պայմաններում անարդյունավետ են անցկացվող պարապմունքները և հանրապետական առաջնությունների անցկացումները
Ծրագրի խնդիրները	Ֆուտբոլի մարզադաշտի կառուցապատում և պահանջվող նորմաներին համապատասխանեցում
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Համայնքում ֆուտբոլով զբաղվող հարյուրավոր երիտասարդների և երեխաներիհամար ստեղծել բարեկարգ և կառուցապատված մարզադաշտ 2.Նպաստել ֆուտբոլով զբաղվողների թվի ավելացմանը 3.Նպաստել սպորտային մյուս մարզաձևերի զարգացմանը, 4. Առողջ ապրելակերպի և սպորտի մասայականության խրախուսում
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	Պատվիրել նախագծային-նախահաշվային փաստաթղթեր, որում պետք է հիմնականում ընդգրկվեն հետևյալ աշխատանքները՝ 1.Հանդերձարանների կառուցում 2.Նստատեղերի և ծածկի կառուցում 3. Պարսպի վերակառուցում և ընդլայնում 4.Վազքուղիների և այլ հանգույցների կառուցում
Ծրագրի բյուջեն	50,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Այլ դոնորական կազմակերպությունների հետ քննարկումների ապահովում
Միջոցառման հիմնական ռիսկերը	Դոնորական կազմակերպության կողմից նախնական պայմանավորվածության չխախտում
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակչությունը, հատկապես՝ երիտասարդությունը և երեխաները
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2018 թ

18, ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՇԵՆՔԻ ՄԱՍՆԱԿԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Համայնքի գույքի կառավարում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Վարչական շենքի դիմային պատը խոնավության պատճառով դարձել է վթարային, անհրաժեշտություն է առաջացել այն ամրացնել և կանխել վթարայնության խորացումը: Անմխիթար վիճակում է գտնվում մուտքի հատվածը, որը նույնպես պահանջում է վերակառուցում
Ծրագրի խնդիրները	Կանխել վարչական շենքի վթարայնությունը, ապահովել համայնքի գլխավոր վարչական շենքի բավարար վիճակը
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Համայնքի կենտրոնում գտնվող և համայնքի գլխավոր վարչական շենքը բերել բարետես տեսքի 2.Ապահովել շենքում աշխատող համայնքային և պետական կառույցների աշխատողների անվտանգությունը
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	Նախագծա- նախահաշվային փաստաթղթերի պատվիրում, որում պետք է ընգրկվեն հետևյալ աշխատանքները՝ 1.Շենքի դիմային մասի 60 քմ պատի երեսպատում բազալտե սալիկներով 2.Մուտքի դռան փոխում
Ծրագրի բյուջեն	2,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Մոտ ապագայում, համայնքների միավորումից հետո, նույն վարչական շենքը շարունակելու է ծառայել որպես խոշորացված համայնքի վարչական շենք: Հետևաբար, այժմվանից ՀՀ կառավարությունը նույնպես պետք է շահագրգռված լինի շենքի ճակատագրի հարցով
Միջոցառման հիմնական ռիսկերը	Համայնքի բյուջեի կապիտալ ֆոնդում անհրաժեշտ միջոցների ապահովում
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակչությունը և համայնքային կառույցներում աշխատողները, Շենքում տեղակայված պետական կառույցներում աշխատողները՝ իրենց կողմից սպասարկվող Ապարանի տարածաշրջանի բնակչությունը
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2017 թ

19. ՀԱՑԱՀԱՎԱՔ ԿՈՄԲԱՅՆԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Գյուղատնտեսության զարգացմանը խթանում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Բնակչության սեփականությունը հանդիսացող 700 հա վարելահողերից ամեն տարի մշակվել է ընդամենը 40 հա /6 % /, 240 հա տնամերձերից՝ 180 հա-ը 44 ընտանիքներ հրաժարվել են 22,73 հա գյուղատնտեսական հողերից և հետ վերադարձրել: Պատճառներից է՝ Համայնքում գյուղատնտեսական տեխնիկաների բացակայությունը, և հատկապես՝ կոմբայնի: Չունենալով կոմբայն, սպասում են մինչև հարևան համայնքներում աշխատանքների ավարտը, որի հետևանքով հացահավաքի աշխատանքները ուշացվում են և տեղի է ունենում բերքի առնվազն 20-25 %-ի կորուստ:
Ծրագրի խնդիրները	Խթանել գյուղատնտեսության զարգացմանը: Նպաստել, որպեսզի հողատարածքներ ունեցող բնակիչները զբաղվեն հողագործությամբ՝ դրանով ընտանիքին ապահովելու լրացուցիչ մթերքներով և եկամուտներով, նվազեցնելու սոցիալական լարվածությունը
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1. Մշակվող հողատարածքների ավելացում, բերքի անկորուստ հավաքում և եկամտաբերության ավելացում 20-30% չափով 2.Գլխաքանակի ավելացում՝ 10-20 % չափով 3. Անասնապահությամբ զբաղվող ընտանիքները ապահովված կլինեն անհրաժեշտ մթերքներով, ավելցուկը կվաճառվի:
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	2016թ կնքված համաձայնագրի համաձայն շարունակել համագործակցությունը գյուղատնտեսության աջակցության ծրագրերի ՊՈԱԿ հետ՝ ծրագրի իրականացման շարունակականությունն ապահովելու համար, համաձայն որի՝ համայնքի 20 % ներդրմամբ ձեռք կբերվեն անհրաժեշտ տեխնիկաներ
Ծրագրի բյուջեն	35,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Ծրագրի շարունակականության ապահովում, համագործակցության 4 տարվա Համար կնքված համաձայանագրի պայմանների ապահովում
Միջոցառման հիմնական ռիսկերը	Համաշխարհային բանկի կողմից ծրագրի ֆինանսավորում
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակչությունը
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2017 թ

20. ԱՂԲԱՏԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ՁԵՌՔ ԲԵՐՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Աղբահանություն և սանիտարական մաքրում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Համայնքում աղբահանությունը և սանիտարական մաքրումն ընդգրկում է շուրջ 240 հա տարածք, որը կատարվում է աղբատար 1 ավտոմեքենայի միջոցով, որն էլ արդեն հնամաշ է /ձեռք է բերվել 2007 թ./, հաճախակի փչանում է, վերանորոգման համար կատարվում են զգալի ծախսեր: 1 ավտոմեքենայի առկայությունը հնարավորություն չի տալիս ավելի ռացիոնալ կազմակերպել աղբահանությունը, որը դժգոհությունների պատճառ է դառնում
Ծրագրի խնդիրները	Ապահովել համայնքում կատարվող աղբահանության կազմակերպման և սանիտարիայի ապահովման բավարար հնարավորություն
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Համայնքում աղբահանությունը կազմակերպել ժամանակին և օպերատիվորեն 2.Ապահովել համայնքում սանիտարական պատշաճ իրավիճակ 3. Ապահովել ,,Մաքուր համայնք'' նպատակի իրականացումը
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.ՀՀ կառավարության լիզինգային ծրագրերով ապահովել ավտոմեքենային ձեռք բերումը
Ծրագրի բյուջեն	13,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	2.Դիմել միջազգային կազմակերպություններին՝ համայնքի 20 % ներդրմամբ ապահովելու աղբատար ավտոմեքենայի ձեռք բերումը
Միջոցառման հիմնական ռիսկերը	Բարի կամքի դրսևորման բացակայությունը
Միջոցառման հիմնական շահառուները	Համայնքի բնակիչներ
Միջոցառման սկիզբ	2017 թ
Միջոցառման ավարտ	2017 թ

21. ԱՂԲԱՎԱՅՐԻ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

(Ծրագրի անվանում)

Ոլորտային ծրագիր	Աղբահանություն և սանիտարական մաքրում
Ծրագրի անհրաժեշտության հիմնավորում	Աղբավայրը գտնվում է Նիգավան համայնք տանող ճանապարհի 4-րդ կմ վրա, Զբաղեցնում է 5 հա տարածք: Տասնամյակներ շարունակ այն ծառայեցվել է որպես աղբավայր, երբեք աղբը չի մշակվել կամ այրվել, որի հետևանքով փոսը լցվել և հավասարեցվել է Նիգավան տանող ճանապարհի մակարդակին: Գտնվելով բաց տարածքում և չունենալով ցանկապատ, քամու հետևանքով ամբողջ պլաստմասե շշերը, ցելաֆոնները , թղթերը տարածվում են ամբողջ տարածքով՝ հասնելով մինչև Ապարան և Նիգավան համայնքները, որի պատճառով ամբողջ բնությունը աղտոտվում է:
Ծրագրի խնդիրները	Շրջակա միջավայրի պահպանության ապահովում
Ծրագրի անմիջական նպատակը, ակնկալվող արդյունքները	1.Շրջակա միջավայրը, բնակավայրերը և հողատարածքները զերծ պահել աղտոտումից 2.Շրջակա միջավայրի պահպանման գործում բարձրացնել բնակչության, և հատկապես երեխաների, պատասխանատվությունը
Ծրագրի իրականացման հիմնական գործողությունները	1.Ապահովել անհրաժեշտ նախագծա-նախահաշվային փաստաթղթեր, որում ներառել՝ -աղբավայրի ճանապարհին հարակից հատվածներում կառուցել 2 մետր բարձ-ությամբ հողաթմբեր, որոնց վրա խիտ շերտով տնկել ծառեր:
Ծրագրի բյուջեն	5,0 միլիոն ՀՀ դրամ
Ծրագրի իրակա-նացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ	Միջազգային կազմակերպությունների օժանդակությամբ հնարավոր են խնդրի լուծման ավելի հիմնավոր և երկարաժամկետ լուծումներ
Միջոցառման հիմնական ռիսկերը	Համայնքի ֆոնդային բյուջեի միջոցների ապահովում
Միջոցառման հիմնական շահառուները	Ապարան և Նիգավան համայնքների բնակչությունը
Միջոցառման սկիզբ	2018 թ
Միջոցառման ավարտ	2020 թ

ՀՀՀՀ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
(ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔ)
/2017 –20121 ԹԹ /

	Ծրագրի անվանումը	Չափի միավոր	Աշխատանքի ծավալ, քանակ	Ծրագրի արժեքը Մլն. դրամ	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրը		
					2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ	Պետ. բյուջե	Դոնոր կազմակ երպութ.	Համայնքի բյուջե
	2	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*		*10*	*11*	*12*
1	Մանկապարտեզի շենքի վերակառուցման ավարտում և շահագործում			142,8	142,8	0	0	0	0	142,8	0	0
2	Թիվ 2 մանկապարտեզին կից կառույցի իրականացում /13x6 մետր-չափ/	ՔՄ	72	20,0	0	20,0	0	0	0	0	20,0	0
3	Բազմաբնակարանային նոր շենքի կառուցման շարունակականության ապահովում	ՔՄ	3800	765,0	70,0	200,0	300,0	195,0	0	765,0	0	0
4	Արոտավայրերի ջրարբիացում	ԳԾՄ	2500	80,0	80,0	0	0	0	0	76,0	4,0	0
5	Փողոցներում գիշերային լուսավորության անցկացում	ԳԾՄ	10000	17,0	4,0	3,0	3,0	3,0	4,0	0	6,0	11,0
6	Բաղրամյան 8, 23, 46, 49, Նժդեհի 10 և Գայի 7 բազմաբնակարանային շենքերի տանիքների հիմնանորոգում	ՔՄ	4200	50,4	0	13,2	13,2	24,0	0	50,4	0	0
7	Փողոցների ասֆալտի փոսային նորոգումներ	ՔՄ	5000	30,0	6,0	6,0	6,0	6,0	6,0	0	0	30,0
8	Ներքաղաքային փողոցների ասվալտապատում	ՔՄ	30.000	240,0	0	60,0	60,0	60,0	60,0	240,0	0	0
9	Գրունտային փողոցներ խճալցում և բարեկարգում	ՔՄ	20.000	5,0	1,0	1,0	1,0	1,0	1,0	0	0	5,0
10	Քաղաքային զբոսայգու կառուցապատում	ՔՄ	14.500	20,0	4,0	16,0	0	0	0	0	16,0	4,0
11	Գերեզմանատների պարսպապատում	ԳԾՄ	2.000	20,0	4,0	8,0	8,0	0	0	0	16,0	4,0
12	Ոռոգման ներհամայնքային համակարգի կառուցում	ԳԾՄ	8.000	80,0	0	0	40,0	40,0	0	80,0	0	0

13	Քյանդալ սելավատարի կառուցապատում	ԳԾՄ	1.500	75,0	0	75.0	0	0	0	75,0	0	0
14	Ջրահեռացման համակարգի կառուցում	ԳԾՄ	8.000	80,0	0	20,0	20,0	20,0	20,0	0	80,0	0
15	Թիվ 1 դպրոցի վերանորոգում	ՔՄ	3.000	60,0	0	60,0	0	0	0	60,0	0	0
16	Արվեստի դպրոցի վերանորոգում	ՔՄ	750	18,0	1,0	17,0	0	0	0	0	15,0	3,0
17	Մարզադաշտի վերակառուցում	Կոմպլ	1	50,0	25,0	25,0	0	0	0	0	50,0	0
18	Համայնքապետարանի շենքի նորոգում	ՔՄ	200	2,0	2,0	0	0	0	0	0	0	2,0
19	Հացահավաք կոմբայնի ձեռք բերում	հատ	1	35,0	35,0	0	0	0	0	28,0	7,0	0
20	Աղբատար ավտոմեքենայի ձեռք բերում	հատ	1	13,0	13,0	0	0	0	0	10,4	0	2,6
21	Համայնքի աղբավայրի կառուցապատում	ՀԱ	5,0	5,0	0	2,0	2,0	1,0	0	0	0	5,0
	ԸՆԴՀԱՆՈՒՐԸ՝			1808,2	387,8	526,2	453,2	350,0	91,0	1527,6	214,0	66,6

ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017-2021 ԹԹ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԾՐԱԳՐԵՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄ

	Ծրագրի անվանումը	Ծրագրերի քանակ	Ծրագրի արժեքը Մլն. դրամ	Ծրագրի կատարումն ըստ տարիների				
				2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ
1	*2*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*	*10*
1	ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ	10	1527,6	327,2	408,2	413,2	319,0	60,0
2	ԴՈՆՈՐ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՄ ՆԵՐԴՐՄԱՄԲ	10	214,0	36,0	104,0	31,0	23,0	20
3	ՀԱՄԱՅՆՔԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԿԱՄ ՆԵՐԴՐՄԱՄԲ	9	66,6	24,6	14,0	9,0	8,0	11,0
	ԸՆԴԱՄԵՆԸ՝		1808,2	387,8	526,2	453,2	350,0	91,0

ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ 2017-2021 ԹԹ ԱՊԱՐԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԾՐԱԳՐԵՐ

	Ծրագրի անվանումը	Չափի միավոր	Աշխատանքի ծավալ, քանակ	Ծրագրի արժեքը Մլն. դրամ	Ծրագրի կատարումն ըստ տարիների					Ֆինանսավորման աղբյուրը	ՆՇՈՒՄՆԵՐ
					2017թ	2018թ	2019թ	2020թ	2021թ	Պետ. Բյուջե /մլն. դրամ.	
	2	*3*	*4*	*5*	*6*	*7*	*8*	*9*		*10*	
1	Մանկապարտեզի շենքի վերակառուցման ավարտում և շահագործում			142,8	142,8	0	0	0	0	142,8	Ընթացքի մեջ է
2	Բազմաբնակարանային նոր շենքի կառուցման շարունակականության ապահովում	ՔՄ	3800	765,0	70,0	200,0	300,0	195,0	0	765,0	Ընթացքի մեջ է
3	Արոտավայրերի ջրարբիացում	ԳԾՄ	2500	80,0	76,0	0	0	0	0	76,0	2-րդ փուլը
4	Բաղրամյան 8, 23, 46, 49, Նժդեհի 10 և Գայի 7 բազմաբնակարանային շենքերի տանիքների հիմնանորոգում	ՔՄ	4200	50,4	0	13,2	13,2	24,0	0	50,4	Ընդգրկված է հրատապ ծրագրերում
5	Ներքաղաքային փողոցների ասվալտապատում	ՔՄ	30.000	240,0	0	60,0	60,0	60,0	60,0	240,0	
6	Ոռոգման ներհամայնքային համակարգի կառուցում	ԳԾՄ	8.000	80,0	0	0	40,0	40,0	0	80,0	
7	Քյանդալ սելավատարի կառուցապատում	ԳԾՄ	1.500	75,0	0	75.0	0	0	0	75,0	
8	Թիվ 1 դպրոցի վերանորոգում	ՔՄ	3.000	60,0	0	60,0	0	0	0	60,0	
9	Հացահավաք կոմբայնի ձեռք բերում	հատ	1	35,0	28,0	0	0	0	0	28,0	
10	Աղբատար մեքենայի ձեռք բերում	հատ	1	13,0	10,4	0	0	0	0	10,4	
	Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը՝			1527,6	327,2	408,2	413,2	319,0	60,0	1527,6	